№ 16 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 25 ՅՈՒՆՎԱՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 25 ՅՈՒՆՎԱՐԻ № 16

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐՔԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենկեզով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1912** Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 բ., 10 ամսվանը՝ 9 բ., 9 ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բ., 7 և 6 ամսվանը՝ 6 բ., 5 ամսվանը՝ 5 բ., 4 ամսվանը՝ 4 բ., 3 ամսվանը՝ 3 բ., 2 ամսվանը՝ 2 բ., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կացնել փոխադրական բանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, թոքերի և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տէլէֆօն № 792.
(ս.օ.) առ. 989. 100—83

ԲԱՐԻՈՒԹՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ

II

Ձեռնարկողների մի խումբ դիմել է Ղարաբաղի թեմական կառավարութեանը՝ անտառները կապալով վերցնելու առաջարկութեամբ։

Ձեռնարկողները [illegible] կորել ծառերը, վճարելով այս ու այն տեսակ ծառի համար որոշ գին։ Եւ որովհետև Ղարաբաղի անտառներում դեռ պահպանվել են կաղնիի և ուրիշ թանդարժէք տեսակի ծառեր, ուստի միլիոնաւոր ծառերի շահագործութիւնը կարող է լուրջ եկամուտի աղբիւր ծառայել թեմական դրամարկղի համար։

Կարելի էր կարծել, որ եթէ հանդէս են եկել այդպիսի ձեռնարկողներ, այն ժամանակ այլևս վերացվում է անտառների կառավարութեան գլխաւոր ծանրութիւնը։ Բայց դժուար չէ համոզվել, որ կանօնաւոր հսկողութիւն և վերահասութիւն անհրաժեշտ և կարեւոր են թէ սեփական տնտեսական շահագործութիւն կազմակերպելու և թէ ուրիշ ձեռնարկութիւններին անցնելու ժամանակ։

Անտարակոյս՝ եթէ թեմական կալուածները լինէին հաղորդակցութեան բանուկ ճանապարհների շրջանում և յարմար լինէր նրանց արդիւնքների վաճառահանութիւնը, այն ժամանակ շատ դրամագլուխներ արդէն մուտք գործած կը լինէին այդ անտառների մէջ և ներկայումս մեծ եկամուտներ կը ստացվէին նրանց շահագործութիւնից։

Ապագայ Եւլախ-Նուշի երկաթուղին բաւական կը մօտենայ անտառների շրջանին, բայց, անկասկած, դարձեալ մեծ կարիք կը զգացվի ճանապարհներ կառուցանելու անտառների միջին վայրերում՝ դիւրացնելու փայտի արտահանութիւնը անտառային խորքերից։

Եւ երբ կազմակերպված տնտեսական կառավարչութիւնը պարզած կը լինի կալուածների հարստութիւնները, կունենայ հողերի յատակագիծները, կազմակերպած կը լինի կանօնաւոր վերատեսչութիւն, դիւրացրած կը լինի հաղորդակցութիւնը անտառային շրջաններում, այն ժամանակ օտար դրամագլուխներն էլ՝ միացած կանօնաւոր տնտեսավարութեան հետ՝ կը տան հրաշալի արդիւնքներ։

Արդարև, եթէ եւրօպական ձեռնարկողները վերցնում են կապալով անտառների մասերը և կամ գնահատում են առանձին-առանձին ծառերը, անհրաժեշտ է, որ անտառի տերը լինէր հսկող, որպէսզի անտառը շահագործվի՝ համաձայն պայմանի և տնտեսութեան մշակած յատակագծի։

Այն, ինչ ասացինք անտառի մասին, նոյնպէս նշանակութիւն ունի և արգաւանդ հողերի, արօտների, մարգերի և հանքերի վերաբերութեամբ։ Առանց կազմակերպված հսկողութեան և տնտեսավարութեան անհնարին է առաջ տանել գործը, ինչ բնաւորութիւն էլ ստանալու լինի կալուածների շահագործութիւնը՝ սեփական միջոցներով, օտար դրամագլուխներով, թէ զանազան եղանակների որոշ դասաւորութիւններով։

Վարչական հաստատ կազմակերպութեան խնդիրը հիմնական է և էական։ Դուցէ այդ կազմակերպութիւնը առաջին տարիներից իսկ չի տայ այնքան օգուտ, որքան սպասում են մարդիկ, բայց ամեն մի խոշոր և բարդ գործ ունի իր զարգացման ասպիճանները։ Նա սկսվում է փոքրից և կամաց-կամ[illegible] եթէ այսօր մենք կազմակերպելով կանոնաւոր կալուածական կառավարչութիւն պէտք է սպասենք դրական արդիւնքների մի քանի տարիներից յետոյ, չը պէտք է մոռանանք, որ եթէ անցեալում իրագործված լինէր մեր ակնարկած կազմակերպութիւնը, այժմ մենք վայելում կը լինէինք նրա օգուտները։

Զենք արել անցեալում այդ սկզբունաւորութիւնը և այսօր տեսնում ենք մեր սխալի հետևանքը։

Եւ եթէ այսօր էլ զանցառու լինենք նոր կուլտուրական ձեռնարկութիւնների մարմնացման վերաբերութեամբ, դարձեալ հեռու մղած կը լինենք թեմի հողային հարստութիւններից սպասելի եկամուտները։

Պէտք է վերջապէս գործի անցնել և բաւարարման պահանջին բաւարարութիւն տալ իրական ձեռնարկութիւններով և շօշափելի գործառնութիւններով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
23 յունվարի

Սմօլենսկ. — Արտակարգ գնացքով ժամանեցին անգլիական հիւրերը և դիմաւորվեցին նահանգապետից և քաղաքագլխից, որ արտասանեց ողջոյնի ճառ։ Երաժշտախումբը նուագեց ռուսական ու անգլիական ազգային օրհներգը։ Հիւրերը դիտեցին քաղաքի հնութիւնները և յետոյ մեկնեցին արտասահման։

—

Լօնդօն. — Թագաւորական զոյգը վերադարձաւ։

—

Հոմ. — Տրիպոլիսից մեկնել է այստեղ գալու և պատերազմի ընթացքի մասին զեկուցանելու համար դեսպան Կանէվան։

—

Վիէննա. — Նէնբրունում կայսրի նախագահութեամբ կայացաւ զինուորական կօնֆերէնցիա Ֆրանց-Ֆէրդինանդի, Ֆրիդրիխի և Եւգենիի մասնակցութեամբ և ներկայութեամբ զինուորական մինիստրի և այլ բարձրաստիճան պաշտօնեաների։

—

Պարիզ. — Սենատում սկսվեցին վիճաբանութիւններ Ֆրանս-գերմանական համաձայնութեան մասին։

—

Տրիէստ. — Սլաւօնական «Եղինօստ» միութեան ժողովը ցոյցի բողոք յայտնեց Խօրվատիայի սահմանադրութիւնը խախտելուն առիթով։ Փողոցում տեղի ունեցաւ ազմկալի ցոյց։

—

Կանէա. — Յեղափոխական ժողովի պահանջով կառավարութիւնը երդվեց հելլէնների թագաւորին և սահմանեց ժամանակ. յեղափոխական կառավարութեան անունը։ Այսուհետև նրան է պատկանելու սոսկ վարչական ֆունկցիաները։ Որոշված է հաստատել մշտական մանաժողով ժողովի 30 անդամներից, նաև կառավարութեան անդամներից՝ յեղափոխութիւնը ղեկավարելու և ազգային հարցը լուծելու համար։ Ընտրութիւնները Կրէտէում որոշված է կատարել միաժամանակ Յունաստանի ընտրութիւնների հետ։

—

Թաւրիզ. — Հանդիսով հողին յանձնվեցին պայթումի ժամանակ զոհված զինուորների մարմինները։

—

Մինխէն. — Մինիստրութիւնը հրաժարական տուաց։

—

Վիէննա. — Բելգրադից հաղորդում են, որ թագաւորը յանձնել է երիտասարդ արմատականների լիդերին բանակցել միւս կուսակցութիւնների հետ կօալիցիոն կաբինէտ կազմելու մասին։

—

Անգլիական հիւրերի Պետերբուրգ գտնված ժամանակ հարց յարուցվեց Պարսկաստանի մասին։ Տեղի ունեցող խռովութիւնը Իրանի երկրում միատեսակ յուզում է թէ ռուս և թէ անգլիական դիւանագիտութիւնը։ «Вечъ. Врем.» լրագիրը ճշգրիտ աղբիւրներից ստացել է տեղեկութիւններ, որ ռուս և անգլիական կառավարութիւնները վճռե[illegible] ներկայ լինելուն Պետերբուրգում, տեղի ունեն շատ նշանաւոր բանակցութիւններ։ Ընդհանրապէս այդ բանակցութիւնները չորս հիմնական կէտերից են բաղկացած. 1) Անգլօ-ռուսական համաձայնութեան պաշտօնական ճանաչումը պարսկական կառավարութեան կողմից այն մտքով, որ այդ պետութիւններից իւրաքանչիւրի ազդեցութեան շրջանը ճշգրտօրէն որոշվի և նրանցից իւրաքանչիւրի ունեցած իրաւունքը հաստատվի։ 2) Նախկին շահ Մահմէդ-Ալիին վերաբերեալ հարցի վերջնական լուծումը և նրա կենսաթոշակի և բնակութեան տեղի որոշումը այն մտքով, որ նա ապրի Ռուսաստանում կամ Անգլիայում։ 3) Պարսկական փոխառութեան հարցի քննութիւնը։ Այն զումարները, որոնք կը ստացվեն փոխառութեան իրագործմամբ, պէտք է ենթարկվեն Ռուսաստանի և Անգլիայի կօնտրօլի։ 4) Պարսկական քաղաքականութեան ուղղութիւնը պէտք է դնվի երկու շահագրգռված պետութիւնների, այսինքն Ռուսաստանի և Անգլիայի կօնտրօլի տակ։ Ինչպէս Ռուսաստանը, այնպէս էլ Անգլիան, բացորոշ կերպով կը յայտնեն այն մասին, թէ իրանցից ոչ մէկը չէ ձգտում գրաւել Պարսկաստանը։ Այսպիսով ուրեմն, անգլիական քաղաքական և պետական գործիչների ներկայութիւնը Ռուսաստանում տալիս է իր առաջին արդիւնքը։ («Р. В.»)

ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
23 յունվարի

Սոֆիա. — Երեկոյեան ժամը 11½-ին Մեծ Իշխան Անդրէյ Վլադիմիրովիչը սերբական գահաժառանգի հետ մեկնեց Բելգրադ։ Կայարանում հրաժեշտ տուին թագաւորը, արքայազներ Բորիսը և Կիրիլը, մինիստրները, ռուսական, սերբական և ֆրանսիական միսսիաների անդամները։

—

Բելգրադ. — Սոֆիայից եկան Մեծ Իշխանը և սերբական գահաժառանգ Ալէքսանդրը և կայարանում դիմաւորվեցին թագաւորից, մինիստրներից, ռուսական միսսիայից՝ դեսպանի առաջնորդութեամբ, և բոլգարական միսսիայից։ Մեծ Իշխանը իջևանեց պալատում։

Թագաւորը անձամբ Մեծ Իշխանին յանձնեց Կարագեօրգիևեան Աստղի ժապաւէնը։

Ժամը 2½-ին Մեծ Իշխանը մեկնեց Վիէննա։ Կայարանում ճանապարհ դրին թագաւորը, թագաժառանգը և մինիստրները։

Մեծ Իշխանի այցի առիթով հին արմատական կուսակցութեան օրգանը «Самоуправа»-ն նկատում է, որ Մեծ Իշխանը թագաւորի թանգագին հիւրն է։ Այցելութիւնը ապացոյց է մեր հիւսիսային սիրելի եղբօր բարեկամական համակրանքների առ մեզ։ Ռուսաստանի այդօրինակ վերաբերմունքը պէտք է բոլոր բալկանեան պաւլօնների համար ծառայէ մեր բարգաւաճման հաստատուն երաշխաւորութիւն։

«Նէյէ-Փրէյէ-Պրէսսէն» Մեծ Իշխանի այցելութեան առիթով նկատում է, որ այդ այցը, որ ինքնին քաղաքավարութեան նշան է, Աւստրօ-Ունգարիայի կողմից ընդունվելու է համակրանքով, որովհետև Մեծ Իշխանի հանդուցեալ ծնողը միշտ բարեկամական համաձայնութիւն էր ցանկանում երկու երկիրների միջև։

«Վիէնէր-Տագէբլատ»-ը գրում է, թէ Մեծ Իշխանի այցելութիւնը համարվում է Վիէննայի և Պետերբուրգի պալատների լաւ յարաբերութիւնների ազդանշան։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
23 յունվարի

Պէկին. — Այս օրերս հրատարակվելու է հրովարտակ դինաստիայի հրաժարականի մասին։ Սակայն իսկապէս հրաժարական բառացի կերպով չէ լինելու, այլ կայսրը ձեռնպահ է մնալու կառավարութեանը մասնակցելուց յօգուտ ժողովրդի, որը իր կողմից ընտրելու է նոր կառավարութիւն հանրապետական հիմունքներով. մանջուրիան [illegible] մեն տարի 4 միլիոն լան ռոճիկ, ապրելու է պալատներում, ունենալու է ներքինիներ ու պալատական պահակախումբ. մանջուր արիստոկրատ-իշխանները կը պահեն ժառանգական տիտղոսներն ու սեփականութիւնը. մանջուրները, չինացիք, մօնգօլները, տիբէթցիները և մահմեդական ցեղերը կը մտնեն հանրապետական կազմի մէջ իբրև իրաւահաւասար քաղաքացիներ։

—

Տօկիօ. — Պարլամենտական համարեա բոլոր կուսակցութիւնները եռանդով ագիտացիա են մղում յօգուտ չինական հանրապետութեան։

—

Չիֆու. — Դէնչժօուից վերադարձած 1000 զինուորների թւում շատերի ոտքերի մատները ցրտատար են եղել։ Վիրաւորվածները տեղաւորված են ֆրանսիական և չինական հիւանդանոցներում։ Քաղաքը պատրաստվում է ընդունել նոր նահանգապետին։ Եւրոպացիները դրամ են հանգանակում յօգուտ Չինաստանի սովեալների։

—

Պէկին. — Խէյլունչժանի նահանգապետին թոյլատրվեց երեք ամսով արձակուրդ, իշխան Ցինին՝ կէս ամսով։

—

Խանկօու. — Մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, Դունչժիժուլը, որ անցել էր հանրապետականների կողմը, պէտք է իր զօրքերը ուղղէ դէպի Պէկին՝ կայսրի գահից հրաժարվելու գործն աջողեցնելու համար։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

«Քէպէ» լրագրի յունվարի 17-ի համարից քաղուածօրէն բերում ենք հետեւեալը.

Այսօր սենատի առանձին ատեանում սկսվեց հայ Դաշնակցութիւն գաղտնի կազմակերպութեան անագին գործը։ Այդ դատը ուշադրութիւն է գրաւում ոչ միայն մեղադրվողների թւով, որոնք պատկանում են Կովկասի ամենատարբեր շերտերին, ոչ միայն իր բացառիկ քնոյթով, որ ըստ տեղծվել է այդ դատի համար, այլ և նրանով, որ նա յանձնվել է սենատի քննութեան, այլ և այն քաղաքական նշանակութեամբ, որ նա ունի։ Այդ գործում խճճվում են կովկասեան կեանքի ամենատարբեր քաղաքական հոսանքներ։ Նրա մէջ արտացոլում է մեր ծայրագաւառի քաղաքականութիւնը Կովկասում՝ սկսած իշխան Գոլիցինից մինչև մեր օրերը. նրա մէջ, վերջապէս, պարունակվում է, աւաղ, իւրաքանչիւր խոշոր քաղաքական դատի մէջ անխուսափելի այն տարրը, որ կապված է պահնորդական բաժնի այնքան ժողովրդականութիւն ունեցող եղանակների հետ։

Դաշնակցութիւն կուսակցութիւնը, ինչպէս յայտնի է, հիմնվել է վաղուց և սկզբում իրան նպատակ էր դրել ոչ թէ որևէ յեղափոխական փորձեր ռուս կառավարութեան դէմ, այլ գործնական օգնութիւն թիւրքերի կողմից անլուր հալածանքների և կոտորածների ենթարկվող թիւրքահայերին Աբդիւլ-Համիդի ժամանակ։ Դաշնակցութեան տէնդէնցիան, յամենայն դէպս, Ռուսաստանի համար ոչ մի վտանգ չէր ներկայացնում. արտաքին քաղաքականութեան տեսակէտից՝ հայերի կռիւը իրանց դրութիւնը բարւոքելու համար Թիւրքիայում, իրանց ռուսահպատակ ցեղակիցների աջակցութեամբ, կարող էր մինչև անգամ և յայտնի օգուտ բերել Թիւրքիայի հետ բարդութիւնների դէպքում։ Մեր ծայրագաւառի քաղաքականութիւնը սակայն շուտով կարողացաւ փոխել Դաշնակցութեան տէնդէնցիան։

Սկսվեց իշխան Գոլիցինի հռչակաւոր կռիւը հայկական սեպարատիզմի դէմ, ըստ կվեց թշնամութիւն յարուցանելու և խրոխտութիւն դնելու քաղաքականութիւնը կովկասեան ազգերի միջև։ Դաշնակցութիւնը, որպէս խորը ազգայնական կազմակերպութիւն, ստիպվեց խառնվել ներքին քաղաքականութեան մէջ։ Երբ հրատարակվեց 1903 թ. յունիսի 12-ի օրէնքը եկեղեցական կալուածները խլելու մասին, այդ կարգադրութիւնը սարսափելի յուզմունք առաջացրեց հայ ազգաբնակութեան ամենայն շրջաններում։

Սկսվեցին բողոքներ, խմբական դիմադրութիւններ իշխանութեան դէմ, և Դաշնակցութիւնն երևաց այդ շարժման կենտրոնում։ Այս կամ այն ձևով կուսակցութիւնը [illegible] տարբեր շերտերի ներկայացուցիչները, որոնք սիրում էին իրանց ազգային եկեղեցին և այն բոլոր կուլտուրական հաստատութիւնները, որոնց պաշտպանութիւնը հայերը համարում էին թէ որպէս իրանց իրաւունքը և թէ իրանց պարտաւորութիւնը։ Հէնց այն ժամանակ Դաշնակցութիւնը ստացաւ լայն հիւղաւորութիւն և շատ ամուր կազմակերպութիւն։

Յեղական խորութեան սուր կերպարանքը հայերի և թուրքերի միջև, որը նոյնպէս սերտ կապ ունի իշխան Գոլիցինի ծայրագաւառային քաղաքականութեան հետ, աւելի ևս այժ տուաց Դաշնակցութիւնը և առաջ մղեց ներքին քաղաքականութեան մէջ։ Դաշնակցութիւնը իր վրա առաւ ինքնապաշտպանութեան խնդիրը և դրա համապատասխան էլ նրա կազմակերպութիւնը ստացաւ մարտական, կարելի է մինչև անգամ ասել պատերազմական բնաւորութիւն։

Համառուսական շարժումը, կովկասը ընկնելով, Դաշնակցութիւնն ևս, ի հարկէ, գրաւեց։ Սակայն հէնց այդ ժամանակամիջոցում հէնց իրան՝ Դաշնակցութեան մէջ սկսվեց անջատման և քայքայման գործողութիւնը։ Մի կողմից չափաւոր տարրերը, որոնք համակրում էին Դաշնակցութիւնը, որպէս ազգային կազմակերպութեան՝ չափաւոր քաղաքական ծրագրով, համարում էին, որ քաղաքական դաւադրութիւնների ժամանակն անցել է և որ քաղաքականութեան նոր ընթացքը Կովկասում կուլտուրական աշխատանքի այլ եղանակներ է պահանջում։ Միւս կողմից, Դաշնակցութիւնը միացան յեղափոխութեան շնորհով տանջանքներից հանված պատահական տարրերը. նրանք խսկապէս ոչ մի կապ չունէին Դաշնակցութեան ծրագրի և տակտիկայի հետ, սակայն նրանց, այն էլ յաճախ առանց որևէ հիմունքների, չափազանցութիւնները ծածկվում էին կուսակցութեան դրօշակի տակ. վերջապէս, նոր բէժիմի ստեղծումը Թիւրքիայում նշանաւոր կերպով խախտեց հէնց հիմքը, որի վրա կառուցված էր կուսակցութիւնը։ Մի խօսքով, Դաշնակցութեան մէջ կատարվում էր մի գործողութիւն, որը կարող էր վերջանալ այդ զօրեղ կուսակցութեան քայքայմամբ, նրանից յետոյ, երբ նրա տարբեր մասերը մեքենայաբար կապող օղակը կտրվեց։ Այդ գործողութիւնը այնքան ակներև էր, որ հարկաւոր չէր առանձնապէս իմաստուն քաղաքագէտ լինել կառավարութեան ընթացքի միակ կանօնաւոր գիծը անցկացնելու համար այդ կուսակցութեան վերաբերմամբ, որը ծագել էր բարենորոգչական կազմի հողի վրա։ Հարկաւոր էր ընթացք տալ

[illegible]

գործողութեանը իր բնական վախճանին հասնելու համար։ Եւ այդ տրամաբանական էր ոչ միայն քաղաքական նպատակայարմարութեան տեսակէտից, այլ և քաղաքական արդարութեան տեսակէտից, որը չէ թոյլատրում, որ վերանորոգված կազմի մէջ փորփորեն հին գործեր և վրէժ առնեն այն «մեղքերի» համար, որոնք սերտ կապ ունեն հին կարգերի հետ։

«Մանագէտները» պահնորդական բաժնից եռանդով աշխատում էին ժողովել նիւթը, տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալութիւններ, այնպէս որ յեղափոխական գործողութիւնների համար մեղադրվող անձանց թւում ընկան այնպիսի գործիչներ, որոնց օրինականութիւնը կասկածից դուրս էր։ Դատի կանչվածներից շատերը ազատ արձակվեցին, սակայն այնուամենայնիւ այսօր մեղադրական նստարանի վրա պէտք է նստած լինեն 157 մարդ։ Տեղական ազգաբնակութեան և մինչև անգամ իշխանութեան կողմից ազդեցութիւն ունենալու երկիւղը այնքան մեծ էր, որ մինչև անգամ քննութիւնը հանվեց կովկասեան դատաստանական իշխանութիւնների իրաւասութիւնից, և դատավարութիւնը նշանակվեց մայրաքաղաքում։

Մեր ասածը արդէն բաւական է հասկանալու համար թէ որքան բարդ է այդ պրոցէսը, որքան զանազան քաղաքական շերտաւորումներ կան նրա մէջ, որոնք պահանջում են ամենախոհուն վերաբերմունք դէպի իրանց, որքան մեծ նշանակութիւն ունի անջատել նրա յիրաւի քրէական տարրը քաղաքական տարրից, որքան անհրաժեշտ է ուշադրութեամբ քննել այն նիւթը, որ ձեռք է բերել գլխաւորապէս պահնորդական բաժինը և քաղաքական խուզարկութիւնը։ Դատավարութեանը հետևում են ոչ միայն հայ ազգաբնակութեան բոլոր շերտերը, այլ և ամբողջ Կովկասը։

Այդ բոլորը տալիս է դատավարութեանը առանձին նշանակութիւն իրերի իսկական դրութիւնը պարզելու մտքով, այն ամենը լուրերը հերքելու մտքով, որոնք կապ ունեն այդ դատավարութեան հետ։

Թւում էր, որ հէնց պրոցէսսի բնոյթը պահանջում է ամենից առաջ հրապարակայնութիւն, հրապարակային քննութիւն այն բարդ կծիկի, որը պիտի բացվի դատարանում։

Բայց որոշված է պրոցէսսը դռնփակ անել, որով հասարակութիւնը դարձեալ պիտի բաւականանայ լուրերով և ասէ-կոսէներով։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 11/24 յունուար

Ի յոգին երկիւղաւոր Թոթանագրութեանց, բանակ շրջանակներու բռնած ընթացքին երևսփոխանական ընտրութիւններու մասին, այսօր պիտի աւելցնեմ, որ ընտրական պայքարի մէջ հայք ալ ստիպուած են խառնուիլ։

Նախորդ ընտրութեան ատեն կուսակցական պայքար գոյութիւն չունէր։ Ազգը կոյր զիւրային Իթթիհատին ընտրական ցուցակներուն համաձայն քուէարկեց։ Իթթիհատը հայ ընտրելիներուն համար համակրեցաւ պատրիարքարանին ընտրելիներուն նախապատուութիւն տալ։ Ասով՝ հակառակ իր սկզբունքներուն՝ Իթթիհատը անուղղակի կերպով ընդունած կըլլար ազգերու թիւին համեմատական երեսփոխանութիւնը և իւրաքանչիւր ազգի երեսփոխանը իր ազգէն ընտրելու սկզբունքը, որ աւելի լայնօրէն կիրարկելու պէտք է աշխատիլ և ոչ թէ այդ նախապէս տրուած իրաւունքն ալ սահմանափակել։

Սակայն հիմա մեր գործը մէկ կուսակցութեան մը հետ չէ, որ կարելի ըլլայ համաձայնութեան մը գալ։ Ընդհակառակը՝ հիմա երկու կուսակցութիւններ կան, երկուքն ալ դարպաս կընծայեն, և պէտք է յարիլ մէկուն, սակայն դժբաղդաբար ազգային համաձայնութիւն մը չկայ։

Դաշնակցականները միշտ Իթթիհատին հաւատարիմ կը մնան և հաւանական է որ անոնց հետ գործակցի։

Ուրիշներ կան, որ ազատականներուն համակիր են և կուզեն անոնց հետ համերաշխիլ։ Ազգը այս կերպով երկպառակ վիճակ մը կը ներկայացնէ, մինչ ուրիշ ազգեր գրեթէ իրենց համար ապահոված են որոշ դիրք մը։

Ալբանացիք, արաբները և յոյները ամբողջովին յարած են ազատական կուսակցութեան, և հաւանական է, որ բացարձակ յաջողութեամբ մը պսակուի իրենց համաձայնութիւնը։

Հայոց վիճակը խախուտ է, վասն զի որդը ներսէն է։ Երբեմն կառավարութիւնը պատրիարքարանի մէջ անցած-դարձածին վայրկեանը վայրկեանին տեղեկանալու համար և ազգային գործերուն վրայ իր հակակշիռը գործադրելու նպատակով՝ պետական պաշտօնեաները կը մղէր ազգային գործերուն։ Հիմա՝ ազգային իշխանութեան հաբուած կուտայ կազմակերպութիւններ շահագործելով՝ փոխանակ երբեմնի էֆէնդիներու դասակարգին։

Մեզի համար արդի պայմաններուն մէջ յարիլ Իթթիհատին՝ դաւաճանութիւն է, վասնզի Իթթիհատը որոշ կերպով մտադրած է հարուածել ազգային ներքին ինքնավար կազմակերպութեանց քաղաքական բնոյթը։

Երկու օր առաջ՝ նորընտիր ներքին գործերու մինիստր Հաջի Ադիլ-բէյ, իր նախորդ պաշտօնին՝ կոմիտէին ընդհ. քարտուղարի հանգամանքով, Իթթիհատի ակումբին մէջ, նախորդ մէջբուներու ներկայութեան ճառ մը խօսած է և Իթթիհատին ծրագիրը ջատագոված է, իսկ ընդդիմադիրներուն ծրագիրը պարսաւած է իբր երկրին շահերուն հակառակ։

Հաջի Ադիլ-բէյ շատ որոշ կերպով ըսած է, թէ իրենց ծրագրին անբաժան մասն է Թիւրքիոյ բաղկացուցիչ ազգերուն տրուած առանձնաշնորհները պահպանել—քանի որ անոնք տրուած են անգամ մը—սակայն քաղաքական հանգամանքը ժխտել անոնց. հպատակ ազգերուն անհատներուն քաղաքական հանգամանքը ճանչնալ, սակայն անոնց հաւաքական քաղաքական կազմը մերժել՝ իբր վնասակար։

Ազատական կուսակցութիւնը ամենէն աւելի Հաջի Ադիլ-բէյ քննադատած է անոր համար, որ անոնց ծրագիրը կը ճանչնայ եղեր՝ պատրիարքարաններու կամ ազգերու քաղաքական հանգամանքը։

Այս հանգամանքներու մէջ՝ բացորոշ կերևայ, թէ հայերը—իբր մէկը այդ ազգերէն, [illegible] ներուն և ոչ թէ Իթթիհատին, որ կը սպառնայ ջնջել ազգերու քաղաքական կեանքը և անոնց հաւաքական գոյութիւնը կը ժխտէ։

Շառայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔՆԵՐ

Մոսկվա, 17 յունվարի

40 տարի է հայ ժողովուրդը «Մշակի»ց լսում է առաջ մղող խօսք, որ հնչվել է երբեմն շատ ուժեղ, երբեմն էլ թոյլ։

Շնորհաւորելով կովկասահայ օրաթերթերի «մեծ եղբօր» 40-ամեակը՝ ցանկանում եմ, որ նա հիմնադրութեան օրից իր վրա վերցրած առաքելութիւնը այսուհետև էլ աւելի արդասաւոր կարողանայ կատարել։

Մշակութիւն անելը երբէք հեշտ գործ չի համարվել, որ շատ լաւ յայտնի է մեր օրագրութեան նախանդամին...

Ցոյս ունենք, որ «Մշակը» դժուարութիւնների առաջ չի ընկճվի և խրոխտ կը դիմէ դէպի նոր կեանք, նոր հորիզոններ...

Պ. Աբելեան

Թիֆլիս, 23 յունվարի

Սրտի անհուն ու անկեղծ զգացմունքով շնորհաւորում եմ «Մշակի» 40-ամեակը՝ մաղթելով յարատևութիւն։

Տիգրան Եսայեանց

Ելիսաւետգրատ, 18 յունվարի

Ջերմագին ողջունում եմ «Մշակի» յոբելեանը, «Մշակի», որ 40 երկար ու ձիգ տարիներ չանգիստ գրել մեր մայրենի լեզուի տարածման և զարգացման համար, ինչպէս և հայութեան համար անընդհատ, անվհատ ու անխոնջ տքնում է։

Մաղթում եմ, որ մեր սիրելի օրաթերթը ապրի դեռ շատ ու շատ 40 տարիներ՝ հակելու համար մեր հասարակական կեանքի առաջխաղացութեանը և թոյլ չը տալու, որ այդ կեանքը ծուռ ու վատնգաւոր քայլեր առնի։

Գէորգ Ս. Բուռնազեան

Նովոբասիյսկ, 17 յունվարի

Շնորհաւորում եմ «Մշակի» 40-ամեայ գործունէութեան յոբելեանը, մաղթելով անսպառ և անընկճելի ոյժ ու զօրեղութիւն՝ մեր ազգութեան ոխերիմ թշնամի խաւարի կաղանքներն խսպառ ջարդ ու փշուր անելու և անհետացնելու։

Կ. Պապեան

ՆԱԻԹԱՑԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Բալախանի, 18 յունվարի

Նաւթային շրջանում աչքի ընկնող փոփոխութիւններ չը կան բացի Ա. Մանթաշեանի նաւթահանքերում վերջին ժամանակներս եղած փոփոխութիւնները։

Ինչպէս իրերի դրութիւնից երևում է, Լ. Ա. Մանթաշեանը վճռել է ոչ միայն շարունակել հանգուցեալ բարեգործ հօր նաւթային գործերը, այլ նշաններից երևում է, որ աւելի լայն ծաւալ պիտի տայ արդիւնաբերութեան։

Հանգուցեալ բարեգործի կենդանի ժամանակը ընդհանուր գործերի ղեկավարները գտնվում էին Թիֆլիսում, և երբեմն մէկ-երկու լիաղօր դալիս էր Բագու, աչքի անցկացնում գործերն ու մի քանի օրից հեռանում։ Սակայն որդին ամսիս 1-ից վարչութիւնը Թիֆլիսից ամբողջովին տեղափոխեց Բագու։

Այժմ Բագումն են գտնվում և գործի գլուխ են անցել Թիֆլիսից տեղափոխված դիրեկտորներից Սամսոն Զէրքէզեանց, Առաքել Սարուխանեան, Շադինեան և Ծուրլենեան, որոնք անմիջական կարգադրութիւնը անձամբ են անում և ոչ հեռագիրներով կամ նամակներով, ինչպէս առաջ էր։

Ոչ մի ֆիրմա այնքան չը տուժեց իր արհեստանոցը փակելով, որքան տուժեց Մանթաշեանի ֆիրման նաւթականպէս, և տասնեակը այնքան չօգավեցին, որքան Մանթաշեանի գործարանների արհեստաւորները։ Վերջիններս ստացան 400—1500 ր. իւրաքանչիւրը և զանազան գործերով իրանց ապահովեցին։ Այդ գումարը, որի չափը հարիւր հազարների հասաւ, ոչ թէ արհեստաւորին պիտի հասնէր իբրև իր աշխատանքի վարձը, այլ որպէս ապահովութիւն, որպէսզի պարապ մնալու դէպքում, մինչև գործ գտնելը կամ սկսելը, նեղ օրերի չենթարկվի։ Սակայն պիտի խոստովանած, որ դրանցից շատերը կանաչ սեղանին զոհ տուին այդ ապահովութեան համար ստացած դրամները։

Այժմ պայմանները բոլորովին այլ են. եթէ գործարանը վերբացուի, թէ ֆիրման կարող է օգտվել և թէ ցիր-ցան եղած արհեստաւորները թափառական կեանքից կազատվեն։

Ս. Դարբագաշ

ԿԱՐԱԻՄՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ ՄԱՀԸ

Եւպատորիա, 10 յունվարի

Դեկտ. 31-ին, առաւօտեան ժամը 11-ին մեռաւ կարաիմների հոգևոր և ազգային պետ՝ խախամ Սամուէլ Մոյսէեվիչ Պամպուլովը 81-ամեայ հասակում։ Հանգուցեալը, խախամ ընտրվելուց շատ առաջ, դեռ 60-ական թուականներին, մեծ հեղինակութիւն է ձեռք բերել իր եռանդուն գործունէութեամբ, ուժեղ կամքով և առատաձեռնութեամբ, մանաւանդ 1864 թուին, երբ անբերրիութեան և սովի տարի լինելով Ղրիմում՝ նա աչքի ընկնող ծառայութիւն է մատուցել՝ կազմակերպելով հայրենի Եւպատորիա քաղաքում չքաւորներին նպաստող մի կոմիտէ։ Այդ թուականներից սկսած Սամուէլ Մոյսէեվիչը նուիրում է իրան հասարակական գործին և 1869 թուին ընտրվում է Եւպատորիայի քաղաքագլուխ։ Այդ պաշտօնը նա վարում է 12 տարի։ Նրա քաղաքագլխութեան օրով և հէնց իր նախաձեռնութեամբ բացվում են արական և իգական պրոգիմնազիաներ (որոնք այժմ գիմնազիաների են վերածված), հիմնվում են փոխադարձ վարկի ընկերութիւն, հեռագրական հաղորդակցութիւն և ուրիշ կուլտուրական և բարեգործական հաստատութիւններ։

1880 թուի փետրվարի 22-ին ընտրվում է Սամուէլ Մոյսէեվիչը կարաիմների հոգևոր և ազգային բարձրագոյն պետ (խախամ) և այդ բարձր պաշտօնում նա մեծամեծ օգուտներ է բերում իր ազգին։

Նրա անմիջական նախաձեռնութեամբ է, որ հիմնվում են Եւպատորիայում կարաիմների սեմինարիա, չքաւոր կարաիմներին օգնող ընկերութիւն, իգական պրոֆեսիոնալ դպրոց, չքաւոր հարանցուներին օժիտ տուող ընկերութիւն, այլ և Սեվաստոպոլում, Խարկովում, Եկատերինոսլաւում, Կիևվում և Բերդեանսկում շինվում են աղօթատներ։ Մի խօսքով, հանգուցեալ խախամի միակ նպատակն է լինում ցրված և այլասերման ճանապարհի վրա գտնվող կարաիմ ժողովրդին համախմբել ի մի՝ յանուն կրօնի, և համայնական կեանք ստեղծել ուրոյն հասարակական և ազգային տնտեսներով։

Այդ գաղափարը իրագործելու համար նա շատ անգամ օգտվել է իր ունեցած դիրքից բարձր շրջաններում, աշխատելով ընդլայնել մինիստրական շրջաբերականներով սահմանափակված՝ կարաիմների իրաւունքները և աւելի որոշակի դատել տալ նրանց հրեաներից։

Այս համառօտ նկարագրից երևում է, թէ որքան անհրաժեշտ անձնաւորութիւն էր հանգուցեալ խախամ Սամուէլ Մոյսէեվիչը իր հայրենի քաղաքին և ազգին, որին նա անգնահատելի օգուտներ տալով՝ մինչև խոր ծերութիւն կրկին չէր դադարում գործելուց։

Եւ դեռ անցած տարի էր, որ ժողովել էր ցուցիչներին՝ քննելու և վճռելու կարաիմ համայնքների համար կենսական նշանակութիւն ունեցող կրօնական և իրաւական խնդիրներ։

Եւ միանգամայն իրաւացի էր ողբում թաղմանը ճառախօսներից մէկը, թէ «Սամուէլ Մոյսէեվիչ, ահա քո շուրջն է հաւաքված քո սիրելի կարաիմ ժողովուրդը։ Ո՞ւմն ես թողնում այս այլասերման նախօրեակին կանգնած ժողովրդին։ Ո՞վ պիտի մեզ պաշտպանէ բարձր շրջաններում, ով պիտի առաջնորդէ մեզ դէպի ազգային ինքնագիտակցութիւն»։ Եւ այդ խօսքերին իբր արձագանք լսվեցին լացի ու հառաչանքի ձայներ, որով թնդում էր քենասայի (աղօթատան) բակը, և որին ձայնակցում էր դուրսը կանգնած հաղարաւոր ամբոխը։

Ցունվարի 4-ին անհամար բազմութիւն էր հաւաքվել հանգուցեալի տան շուրջը և քենասայ տանող փողոցները։ Այդ օրը Սամուէլ Պամպուլովի մարմինը հողին էին յանձնելու։ Քենասայի բակն էին հաւաքվել բացի տեղացի հարուստ կարաիմներից և ինտելիգենտներից նաև Օդեսայից, Նիկոլայեվից, Սիմֆերօպոլից, Խարկովից, Թէոդոսիայից, Կիևվից և Մոսկվայից եկած պատգամաւորութիւնները, նոյնպէս և քաղաքիս հաստատութիւններից։ Ի թիւս ուրիշ համայնքների կային և հայ համայնքի ներկայացուցիչները։

Նահանգապետ Ափրակսինը անձամբ եկել էր թաղմանը ներկայ լինելու։ Եւ իսկապէս Եւպատորիայում չը տեսնված մի հանդէսով տարան դագաղը կարաիմների գերեզմանոցը, որին հետևում էր ամեն ազգից մեծ բազմութիւն։

Կարաիմ գիտակից և ինտելիգենտ մասը այժմեանից իսկ սկսել է որոնել արժանաւոր թեկնածու խախամութեան։ Երկու հոգու անուն է առ այժմ տրվում՝ նախկին անդամ Պետական Դումայի Ա. Կրիմի և Էքս-շահի՝ Մահմէդ-Ալիի դատիարակ՝ Շափշալի։ Ամենից շատ շանս ունի ընտրվելու Կրիմը։

Պ. Թումանեան

ՕՐԷՆՔԸ ՄԵՌԱԾ ՏԱՌ Է ՄԵՋԱՆՈՒՄ

Ո՞ւմ չէ յայտնի, որ ժողովրդի կեանքի պայմանները բարեկեցիկ հիմունքների վրա դնելու համար իշխանութիւնները ժամանակի ոգուն և պահանջին համեմատ օրէնքներ են մշակում։ Մեր հոգևոր իշխանութիւնն էլ որոշ ասպարիզում ունենալով իր ուրոյն դերը՝ ունի մշակած օրէնքներ ու կանոններ։ Բայց վերջին տարիներում իր տուած օրէնքների մէջ ամենահամատուն և մարդասէր օրէնքն է պակվող տղային «վենեբական ախտից» առողջութեան վկայագիր պահանջելը։ Թէև սա շատ միակողմանի և սեղմված օրէնք համարվեց, և սրա համար մամուլի մէջ հարց բարձրացաւ, թէ ինչու միայն տղայից պահանջել և ոչ աղջկանից էլ։ Ինչու միայն վենեբական ախտից և ոչ ընդհանուր առողջութեան վկայագիր չը պահանջել։

Սակայն որպէսզի տեսնվի, թէ այն նեղ և միակողմանի ու իրաչափով խիստ անհրաժեշտ օրէնքը ինչ չափով է կատարվում, թող ներվի ինձ դնել հասարակութեան դատաստանի առաջ հետևեալ օրինակը։

Սրանից երկու ամիս առաջ Լոռու վիճակի Գեռագեառ գիւղացի մի պարոն, որ մի քանի տարի է, ինչ ապրում է Բօրժոմում, դիմում է Բօրժոմի ծխատեր՝ Վարդան ք. Վարդանեանցին և խնդրում է պակել իրան իր նշանած համագիղկուհուհետ, որը ապրում է Բօրժոմում։ Բահանայի պահանջին, թէ պսակվելու համար տղան վենեբական ախտից ազատ լինելու մասին վկայական պիտի ներկայացնէ, պարոնը զարմանալով պատասխանում է.

— Ի՞նչ վկայական. մեզանում այդպիսի բան իսկի չեն պահանջում։

Հետը եղող նոյն վիճակի դիւղացիք ևս նոյն ոգին են հաստատում։ Բայց երբ քահանան պնդում է, որ անպատճառ հարկաւոր է բժշկից վկայական, պակվող տղան դիմում է բժշկի։ Բժիշկը քննելով՝ նրան չէ տալիս առողջութեան վկայական։ Պարոնը դիմելով քահանային խնդրում է առանց նորից վկայական պակել իրան։ Բայց երբ քահանայից կտրական բացասումն է ստանում գնում է Սուրամ գիւղը և այնտեղ պակվում ու յաղթական կերպով մտնում է Բօրժոմ, ի հարկէ մտքումն անարգելով թէ օրէնքը, թէ օրէնք տուողին և թէ օրէնքը պահողին։

Կարծեօք ժամանակ է, որ մեր հոգևոր իշխանութիւնը քննէ, թէ արդեօք պակվողը ներկայացրել է բժիշկից վկայական։ Եթէ ոչ, ապա ով է պակի հրամանը տուել, ով է պակել, ո՞ր օրէնքով և ինչ իրաւունքով։

Անցորդ

Բօրժոմ

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԽՈՀԵՐ

Մադրաս (Շամախու գ.) 7 յունվարի

Կաթողիկոսական ընտրութեան արդիւնքը մեր միջավայրում ևս ճնշող տրամադրութիւն է առաջ բերել։ Նրանք, որոնք մեր գեղեցիկ Կովկասի ամենամեծ ազգը՝ մալիարիան է, որը մի առանձին ուսումնասիրութեան և ուշադրութեան առարկայ է դարձել, և դեկտեմբերին բժշկական համաժողովում մալիարիայի մասին եղան շատ հետաքրքրական զեկուցումներ և դասախօսութիւններ։

Այդ համաժողովում, ինչպէս երևում է բժ. Բոժովսկիի յօդուածից*), պարզվեց հետևեալը. 1) Կովկասը և այժմ, շատ սակաւ բացառութեամբ, կարելի է համարել՝ մալիարայի վերաբերմամբ՝ մահաբեր, 2) վերջինը՝ շատ տարածված լինելով՝ ժողովրդային մեծ աղէտ է, որը ազգաբնակութեան ֆիզիկական, էկոնոմիական և բարոյական քայքայման պատճառ է լինում, ի հարկէ, այնտեղ, ուր տիրապետում է մալիարիան, 3) կատարելապէս հնարաւոր է կռուել մալիարիայի դէմ, եթէ օգտվենք գիտութեան ցոյց տուած միջոցներով, որի համար հարկաւոր է սիստեմատիկական կռիւ նրա դէմ վերոյիշեալ գիտութեան առաջարկած միջոցներով։

Այդ միջոցներից ամենազլխաւորը խինինն է, որը գործադրվում է այժմ աֆրիկական գաղութներում ըստ առաջարկութեան հանգ. հռչակաւոր Կոխի, այժմ կենդանի նոյնպէս նշանաւոր մալիարիագէտ իտալացի Զելլիի (Челли) և այլն։ Եւ Իտալիայում այդ միջոցը երևելի հետևանք է տուել։ Մենք այդ միջոցի մասին գրել ենք անցեալ տարի «Գիւղատնտեսի» մէջ երկարօրէն, բերելով մի շարք գիտական հետազօտութիւններ։ Այս փոքր շեղումը ներկայ յօդուածում ունի իր պատճառաբանութիւնը։ Ցայտնի է, որ Կովկասում հաճարեա չը կան մալիարիազերծ տեղեր, ի բաց առեալ՝ Շուշուց, Աբասթումանից, Դիլիջանից և Ղարաքիլիսայի վերի մասերից։ Միւս բուժավայրերը, օրինակ՝ հռչակաւոր կովկասեան հանքային ջրերը, ազատ չեն մալիարիայից, ինչպէս և մենք դիտել ենք։

Ապա ուրեմն բուժատեղին՝ լայն մտքով վերցրած՝ մեր մալիարիոտ Կովկասում անպայման պիտի զերծ լինի մալիարիայից, որին ենթարկված է Կովկասն, մանաւանդ Անդրկովկասի ազգաբնակութիւնը, որը՝ ըստ պաշտօնական տեղեկութիւնների՝ տալիս է տարէն մէկ միլիոնի չափ հիւանդացումներ։ դա դեռ պաշտօնականն է, այսինքն՝ յայտնին, բայց իսկականը պիտի հաշուել աւելի շատ։ Ակամայ կը ծագի հարց. ինչու մենք այդքան մեծ ուշադրութիւն ենք դարձնում մալիարիայի վրա։ Գլխաւորապէս նրա համար, որ մալիարիոտ անձինք առանց որևիցէ դեղօրայքի մալիարիազերծ վայրերում առողջանում են, ինչպէս ապացուցել են եղերական մահով վախճանված՝ Բաթումի հիւանդանոցի գլխաւոր բժ. Տրիանդաֆիլիդէսը և նրա բժիշկ կինը, քննելով արիւնը։ Ապացուցված է նոյնպէս, որ արեան կարմիր գնդակների թիւը, որը սովորաբար հաշվում է 5 միլիոն, մալիարիայից կարող է իջնել մինչև $^1/_2$ միլիոնի և այլն։

Ահա ինչու ամենամեծ ուշադրութիւն պիտի դարձվի բուժատեղի վրա՝ այդ յոյժ կարևոր հանգամանքը ի նկատի ունենալով։ Մեր կարծիքով՝ այն տեղերում, ուր լինում են տեղային ծագումից մալիարիա, չէ կարելի սանատորիա ունենալ։ Դիլիջանը՝ մեր և բազմաթիւ բժիշկների դիտողութեամբ՝ տեղական մալիարիա չունի։ Միւս յոյժ վտանգաւոր հիւանդութիւնը, որը ամառները սարսափելի զոհեր է տանում, այդ մանր երեխաների՝ «երեխայոց խօլերա» կոչվող հիւանդութիւնն է։ Այդ վերջինը նոյնպէս սակաւ է պատահում Դիլիջանում։ Բայց, ինչպէս վերև յիշեցինք, դրանք լուրջ գիտական դիտողութիւններ չեն. այդպիսիները այն տեղերում են, որ հաւաքել է բժ. Կոզլովսկին 5 տարվայ ժամանակամիջոցում։ Դիլիջանի մալիարիազերծութիւնը յոյժ կարևոր է մանաւանդ նրա համար, որ այդտեղ գալիս են՝ գլխաւորապէս մօտիկ մալիարիոտ Երևանեան նահանգից, մասամբ Գանձակի, Թիֆլիսի և Բագուի կողմերից։ Ահա առ այժմ իմ ասելիքս Դիլիջանի մասին, իբրև կուրորտատեղի։

Բժ. Բ. Աղասարեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻԼԻՋԱՆԸ ԻԲՐԵՒ ԲՈՒԺԱՏԵՂ (ԿՈՒՐՈՐՏ)

Բազմաշխատ և բազմեռանդ իշխանուհի Մ. Թումանեանը, որը բազմաթիւ հասարակօգուտ և ազգօգուտ հիմնարկութիւնների մէջ հանդիսացել է թէ իբրև նախաձեռնող և թէ եռանդուն աշխատակցուհի, վերջերս՝ Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութեան նախագահուհի, որի մեծ մասնակցութեամբ և ջանքերով հիմնվում է Աբասթումանում ռանատորիա 126 մահճակալներով, այժմ բարձրացրել է մի յոյժ կարևոր հարց, որի լուծումը շատ մեծ բարիք պիտի հասցնէ աւելի մեծ թիւ հիւանդների, կազմուածքով քայքայվածների և այլն։ Հարցը վերաբերում է Դիլիջանին, որը, ինչպէս յայտնի է, աննման կլիմա և աջող դիրք ունենալով և մի քանի հանքային ջրեր՝ զեպերեան, ալկալային և երկաթի՝ մի քիչ հեռաւորութեան վրա, կարող է շատ մեծ ապագայ ունենալ։ Ցայժմ նա ծառայում էր՝ իբրև հրաշալի ամբարանոց եկողների համար, բայց այժմ դրան մի քանի նախաձեռնող անձինք կամենում են աւելացնել և ջրաբուժարան, արմատապէս բարեկարգելով Դիլիջանը, որը այժմ արդէն ունի էլեքտրական լուսաւորութիւն։

Մենք, երկար տարիներ պաշտօնավարելով Ղազախի գաւառում՝ իբր բժիշկ և շատ ամառներ անցկացնելով Դիլիջանում, ի նկատի ունենալով հարցի մեծ կարևորութիւնը, չենք կարող խուսափել մասնակցելուց յիշեալ հարցի լուսաբանութեան մէջ՝ առողջապահական տեսակէտից։

Դիլիջանը ունի լեռնային դիրք 4200 ֆուտ բարձրութեամբ, հայկական մասում աւելի ևս բարձր, մանաւանդ զինուորական հիւանդանոցի և նրանից վեր և բարձրաւանդակի վրա։

Դիլիջանին պակասում էին օդերևութաբանական (метеорологическій) դիտողութիւններ, որ, ըստ իշխանուհու, արել է վերոյիշեալ հիւանդանոցի բժ. Կոզլովսկին 5 տարի շարունակ։

Ահա այդ ամենակարևոր գիտական տեղեկութիւններն են ամենածանրակշիռ հանգամանք ունեցող տուեալները, որոնք գործնականօրէն պիտի ապացուցանեն Դիլիջանի ընդհանուր տպաւորութիւնից ստացած յանձնարարականը, իբրև հրաշալի լեռնային ամբարանոցատեղի։

Հետևաբար՝ յոյժ ցանկալի է, որ բժ. Կոզլովսկիի ժողոված տեղեկութիւնները հրատարակվեն ի գիտութիւն հասարակութեան, նոյնպէս հարկաւոր է ունենալ տեղեկութիւններ եւ այն հիւանդութիւնների մասին, որոնք պատահում են տեղուստեղը, ոչ թէ եկողների մօտ, այսինքն որոնք դրսից բերվում են։ Այդ վերջին տեղեկութիւնը մանաւանդ մեծ նշանակութիւն ունի, և ահա ինչու։

Մեր գեղեցիկ Կովկասի ամենամեծ ազգը՝ մալիարիան է, որը մի առանձին ուսումնասիրութեան և ուշադրութեան առարկայ է դարձել, և դեկտեմբերին բժշկական համաժողովում մալիարիայի մասին եղան շատ հետաքրքրական զեկուցումներ և դասախօսութիւններ։

Այդ համաժողովում, ինչպէս երևում է բժ. Բոժովսկիի յօդուածից*), պարզվեց հետևեալը. 1) Կովկասը և այժմ, շատ սակաւ բացառութեամբ, կարելի է համարել՝ մալիարայի վերաբերմամբ՝ մահաբեր, 2) վերջինը՝ շատ տարածված լինելով՝ ժողովրդային մեծ աղէտ է, որը ազգաբնակութեան ֆիզիկական, էկոնոմիական և բարոյական քայքայման պատճառ է լինում, ի հարկէ, այնտեղ, ուր տիրապետում է մալիարիան, 3) կատարելապէս հնարաւոր է կռուել մալիարիայի դէմ, եթէ օգտվենք գիտութեան ցոյց տուած միջոցներով, որի համար հարկաւոր է սիստեմատիկական կռիւ նրա դէմ վերոյիշեալ գիտութեան առաջարկած միջոցներով։

Այդ միջոցներից ամենազլխաւորը խինինն է, որը գործադրվում է այժմ աֆրիկական գաղութներում ըստ առաջարկութեան հանգ. հռչակաւոր Կոխի, այժմ կենդանի նոյնպէս նշանաւոր մալիարիագէտ իտալացի Զելլիի (Челли) և այլն։ Եւ Իտալիայում այդ միջոցը երևելի հետևանք է

*) Д-ръ Божовскій. „Къ вопросу о борьбѣ съ маляріею“ („Тифл. Листокъ“, № 6, 1912 г.).

հայկական ներքին կեանքի և իրանց միջև եղած կապը համարում են սերտ և անկեղծ, և նրանք, որոնք առանց որևէ ակնկալութեան փափագողներ են յիշեալ կեանքի մի քանի խորտակված կողմերի վերականգնման ու վերաշինման—բոլորն էլ գնահատութեան ենթարկելով Թեմիս առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսի և Թեմիս աշխարհական պատգամաւոր բժշկապետ Թ. Զաքարեանի բողոքաւոր քայլերը՝ ընդունում են, որ նրանք՝ այդ քայլերը՝ լուրջ են, մտածված, կօրրեկտ և միանգամայն համապատասխան իրանց ցանկութեան, մի ցանկութիւն, որ անմիջապէս բղխում է մեր հայկական արդի կեանքի պահանջների խոհուն գիտակցութիւնից։ Մանաւորապէս մեր բուռն յարգանքին է արժանացել մեր հայրենակից բժշկ. Թ. Զաքարեանը, որ սրբութեամբ է վերաբերվել իրան ընծայած մեր հաւատին։

Հայկական լայնածաւալ կեանքը ընդհանրապէս, իսկ մեր մի՛ջավայրը՝ մասնաւորապէս լի են ցաւոտ կողմերով։ Մասներով կարելի է համարել մեր այն թեմական առաջնորդներին, որոնք իրանց անբասիր վարք ու բարքով և գործունէութեամբ ոչ միայն արդարացնեն իրանց վրա դրված ժողովրդական յոյսերն ու տենչերը, այլև իրանց ներկայութեամբ ու գոյութեամբ պատիւ կարողանան բերել իրանց ժողովրդին ու ազգին։ Փոքրաթիւ են մեր դպրոցներում այն ուսուցիչ-ուսուցչուհիները, որոնք չը լինեն բաղդախնդիրներ ու մեղանչայտ ալեակալ պատճառներով չը լինեն փաթաթված մեր դպրոցների վզին։ Շատ քիչ կարելի է պատահել այնպիսի երեցփոխների, որոնք կանգնած լինեն իրանց կոչման բարձրութեան վրա և խղճի մտօք ձեռք տան եկեղեցական-ժողովրդական կոպեկներին։ Մեր մէջ բացակայում է պարզ, որոշ և մեկին հասկացված ամուսնական հարցը։ մեր առաջնորդներն անգամ խարխափում են կենսական բնոյթ ունեցող այդ հարցի շուրջը կազմված քաոսի մէջ, թող թէ ժողովուրդը։ Մեր կեանքի այդ և նման ցաւոտ կողմերը իրանց սպեղանին սպասում են կաթողիկոսի հայեցողութիւնից և վերաբերմունքից, քանի որ նրանք ենթակայ են նրա անմիջական իրաւասութեանը։ Մի ըստ ամենայնի ուսեալ, շրջահայեաց և հեռատես կաթողիկոս, ուրեմն, շատ բան ունի անելու և կարող էլ է անել այդ ուղղութեամբ։

Եւ երբ մեր թեմական պատուիրակներից Թ. Զաքարեանը իրան յայտարարեց կողմնակից սրբազան Օրմանեանի կաթողիկոսանալուն, վստահեց մեր ընտրած պատուիրակների միջոցով ամենքիս հաւատն ու վստահութիւնը, որովհետև ամենքս մեր խախտված և անկարգացած կեանքին վերակենդանութիւն և կարգ ու կանոն տուող կորովը տեսնում էինք—և այժմ էլ նոյն կարծիքի ենք—մեր արդի հոգևորականներից միմիայն Օրմանեան սրբազանի մէջ։ Թ. Զաքարեանն, ուրեմն, մեր՝ ժողովրդիս վերաբերմամբ եղել է սրտաբաց, մենք էլ նրա վերաբերմամբ եղել ենք անկեղծ։ Իմացել ենք նախօրօք նրա գաղափարն ու տրամադրութիւնը և առանց վարանելու վստահացել ենք նրան մեր ձայնը, որ է՝ մեր անկապտելի իրաւունքը։ Մենք առանց խնայելու տուել ենք նրան մեր յարգանքը և միաժամանակ պահանջ ենք դրել, որ նա ևս փոխարէնը յարգի մեզ ոտքի տակ չը տալով մեր իրաւունքը։

Արդ՝ հրապարակով գալիս ենք մեր անհուն շնորհակալութիւնը յայտնելու մեր պատգամաւոր և միաժամանակ մեր յարգելի հայրենակից Թ. Զաքարեանին, որ ամենքան սրբութեամբ պահելով իր մօտ մեր իրաւունքը, նոյն սրբութեամբ էլ վերադարձրել է մեզ։ Շնորհակալ ենք, որ նա պատով է կանգնել իր առանձնած պաշտօնի բարձրութեան վրա, օրինախախտումների և անարդ բռնութիւնների որջից փրկելով մեր ձայնը, որին սպառնում էր վտանգ, և ազատելով մեզ ապագայի ծանր և սոսկալի պատասխանատուութիւնից։ Ժողովրդական իրաւունքի արի պաշտպան և իր պաշտօնի վեհութեանը անդաւաճան ծառայած Թ. Զաքարեանին մեր բուռն յարգանքը։

Մեր խորին յարգանքը նոյնպէս և այն բողոքած և համազգային ժողովից հեռացած աշխարհական և հոգևորական պատգամաւորներին, որոնք եղել են համագաղափար մեր պատգամաւորին։

Հայրենակից

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 23 յունվարի

Նախագահում է Բոդզեանկօն։

Գօրնէվը 5 ժամ շարունակ մանրամասն բացատրութիւններ է տալիս Դումային այն մասին, թէ ինչպէս է գործադրվել 1908 թ. պետական եկամտի յօդուածները։ Վերջում զեկուցողը կարդում է մասնաժողովի ցանկութիւնները։ Գօրնէվը ենչում է ամբիոնից ձախակողմեանների, կենտրոնի և նացիոնալիստների երկարատև ծափահարութիւնների տակ։

Երեկոյեան նիստում նախագահում է դարձեալ Բոդզեանկօն։

Դուման ընդունում է այն օրինագիծը, որով 1890 թւի զեմստվային կանոնագրութիւնը գործադրվելու է Օրէնբուրգի նահանգում։

Պոտուլովը զեկուցանում է արտակարգօրէն Ստաւրօպոլի նահանգում զեմստվո մտցնելու մասին ներկայացված օրինագիծը։

Լեսանիցկին գտնում է, որ գիւղացիները Ստաւրօպոլի նահանգում մասնաւոր սեփականատէրերից 7 անգամ աւելի հողեր ունեն, մինչդեռ այդ հողերի արժէքը 11 անգամ աւելի է մասնաւոր սեփականատէրերի հողերի գնից. անհրաժեշտ է ցէնզը իջեցնել։

Ռվանով 2-րդ նոյնպէս կողմնակից է գիւղացիների ներկայացուցչութիւնը աւելացնելուն, որովհետև Ստաւրօպոլի գիւղացիութիւնը աչքի է ընկնում իր ինքնագործունէութեամբ, և մասնանշում է, թէ անհրաժեշտ է վերածել Ստաւրօպոլը առանձին զեմստվային միութեան։

Դուման ընդունում է շտապողականութիւնը և ձեռնարկում է օրինագծի յօդուածային ընթերցման։

Դուման յօդուածային քննութեան ժամանակ ընդունում է օրինագիծը մասնաժողովի խմբագրութեամբ, մերժելով Ստաւրօպոլը անկախ զեմստվային միութիւն դարձնելու առաջարկութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ «Зак. Рѣчь» թերթը իր 19-րդ համարում տեղեկութիւններ է հաղորդում «Մշակի» 40-ամեայ գոյութեան յօբելեանի տօնման մասին։

✦ Թիֆլիսի նահանգի գիւղերում ներկայումս գործում են 33 մանր վարկային և փոխատու-խնայողական ընկերութիւններ, որոնք ունեն 5509 անդամ և 163,210 ռուբլի շրջանառութեան դրամագլուխ։ Հինգ քաղաքներում գոյութիւն ունեն համանման ընկերութիւններ 1736 անդամներով 89,350 ռուբլի դրամագլխով։ Մանր վարկի գլխաւոր վարչութիւնը հարց է տուել Թիֆլիսի վարչութեան, թէ ինչ չափով են կօօպերատիվ հաստատութիւնները նպաստում Թիֆլիսի նահանգի գիւղական—երկրագործ աղգաբնակութեան։ Վերևում առաջ բերված տուեալները գեղեցիկ կերպով ընդարձակում են կօօպերացիայի զարգացման չափերը մեր նահանգի գիւղերում, մանաւանդ որ մանր վարկային հաստատութիւնները Թիֆլիսի նահանգում սկսել են գործել միայն վերջին 3—4 տարիներից ի վեր։

✦ Մօտ օրերս Թիֆլիսում կը սկսէ գործել փոխատու վարկի երրորդ ընկերութիւնը, որի կանոնադրութիւնը արդէն հաստատված է։ Հիմնադիրները ռուս դրամատէրերն են։

✦ Տախտակ արդիւնաբերող Ակակի Խոշտարիային տրված է մեծ կոնցեսիա Հիւսիսային Պարսկաստանի անտառները շահագործելու համար։ Կազմված է օտար դրամատէրերի ընկերութիւն։

✦ Ներկայ տարվանից Թիֆլիսի արհեստագիտական դպրոցի դարբնոցում, դպրոցի տեսչի նախաձեռնութեամբ, կը բացվի գիւղատնտեսական գործիքներ պատրաստելու դասընթաց։

✦ Քամոյեան եկեղեցու օծման հանդէսը կը կատարվի յունվարի 29-ին։

✦ Յունվարի 20-ին Մոսկվայում տեղի է ունեցել վրացական երեկոյթ, որին մասնակցել են անգլիական հիւրերից ոմանք։

✦ Ստացանք «Գեղարուեստ» պատկերազարդ հանդէսի 1911 թ. գիրքը (№ 4)։ Նրա մասին առանձին կը խօսենք։

✦ Սանիտարական պահանջներին չը համապատասխանելու պատճառով ոստիկանութիւնը քաղաքիս երկրորդ քաղաքամասում փակեց 35 փուռ և թոնրատուն։

✦ Քաղաքագլուխ Ա. Խատիսեան դիմեց Թիֆլիսի նահանգապետին թոյլ տալու Պետերբուրգ մեկնել, ուր կանչված է «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի համար որպէս վկայ։

✦ Եղբ. Խ. և Մ. Սամուէլեաններին պատկանող «Պետալոցցի» գրախանութը Դօնի վրայի Ռոստով քաղաքում վերջերս կազմակերպված գիւղատնտեսական ցուցահանդէսից ստացել է արծաթէ մեդալ՝ սեփական արտադրութեամբ պատրաստված դպրոցական պիտոյքների համար։

✦ Գարնանային եղանակները սկսվելու պատճառով կրկին ձեռնամուխ եղան Թիֆլիսի էլեքտրական լուսաւորութեան աշխատանքներին։

✦ Մեզ խնդրում են յայտնել, որ Ժողովրդական Համալսարանների Ընկերութեան հայկական սեկցիայի անդամների ժողովը, որ յայտարարված է այսօր, երեկոյեան ժամը 6-ին, յետաձգվում է մինչև ոստիկանութիւնից թոյլտուութիւն ստանալը։ Ժողովի նոր օրը և ժամը կը յայտարարվի։

✦ Պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի կառավարիչ Դ. Բեզօբրազովը կանչված է Պետերբուրգ պաշտօնական գործերով, ուր կը մեկնի յունվարի 25-ին։

✦ Պետական խնայողական դրամատների վերաքննիչներ Ալնէր, Լօզնիս, Զեսօվսկի և Ալբիցկի ժամանելով Պետերբուրգից, ամսիս 23-ին ձեռնարկեցին պետական բանկին կից գործող խնայողական դրամատան հաշիւների վերաքննութեան։

✦ Քութայիսի բանտում կալանաւորված վրաց գրող Ի. Բախտաձէ գրել է երկու նոր պիէս, որոնք են՝ «Վրացական Սանին» և «Սիլօվանը վրացի կանանց դատարանի առաջ»։

✦ Ներկայիս դատապարտված վրաց «Մնաթօբի» թերթի խմբագիր Ռ. Վաճրիձէ պատասխանատուութեան է ենթարկվում համաձայն 129-րդ յօդուածի։ Թերթը հրատարակվում էր Քութայիսում։ Դատը տեղի կունենայ փետրվարին Թիֆլիսի դատատանական պալատում։

✦ Երիտասարդ գրող Դ. Կասրաձէն ազատ թարգմանութեամբ վրացերէնի է փոխադրել Հ. Հօֆմանստալի «Էլեքտրէ» յայտնի ողբերգութիւնը։

✦ Թիֆլիսի կառապանների աւագ ընտրվեց Լասկուտով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական ներկայացում

Դերասան Ե. Աբէլեանը իր բենեֆիսի համար ընտրել էր Սարդուի «Հայրենիք» դրաման։ Նա առաջ էլ հանդէս է եկել այդ պիէսում, կատարելով, ինչպէս և այժմ, կոմս Դէ Ռիզօօրի դերը։

Թէ դերասանի արտիստական տօնակատարութիւնը և թէ պիէսի բեմականութիւնը գրաւել էին մեծ բազմութիւն դէպի յունվարի 23-ի ներկայացումը Արտիստական թատրոնում։

«Հայրենիք» դրամայի նիւթը պատմական է։ Նա վերաբերում է շատ յայտնի մի շրջանի, որ պատմութեան սև էջերից մէկն է։ Դա սպանական կրօնական ֆանատիկոսութեան սարսափների շրջանն է Նիդերլանդիայի բազմատանջ երկրի վրա։ Դա արիւնարբու դուքս Ալբայի ստեղծած դժոխքի և սոսկալի ոճիրների շրջանն է։

Սարդուն տալիս է այդ շրջանի նահատակութիւնների մի նկարագիրը։ Նրա պիէսը տպաւորիչ է և լի էֆֆեկտներով։ Նա, ճիշդ է, չունի նուրբ հոգեբանական հիւսուածք և կենսական յարաբերութիւնների խորաթափանց վերլուծութիւն, բայց պարունակում է մի երկու հիմնական գրաւիչ տեսակէտներ, որոնցով պիէսը ստանում է զաղափարական նշանակութիւն։ Պիէսը պատում է խղճի և ազատանքի անբռնադատութեան, հայրենիքի ազատութեան, քաղաքացիական առաքինութեան գաղափարների շուրջը։

Աբէլեանը կոմս Դէ Ռիզօօրի դերում հանդէս բերեց հայրենիքի սիրով համակված անձնուրաց մի հերոսի, որը ունի և մի ուրիշ մասնաւոր սէր դէպի մատաղահաս դօննա Դոլօրէսը։ Նա անպայման գերադասութիւն է տուել առաջին սիրուն, բայց և գերի է իր մասնաւոր սիրուն։ Նա շաղկապել է երկու սէրերը միասին և ապրում է հոգեկան ներդաշնակութեամբ։ Բայց հանգամանքները պատրաստում են նրա համար հոգեկան խստագոյն տանջանքներ։ Նրա առաջ բացվում է մի սոսկալի ընտրանեկան դժբաղդութիւն։ Դօննա Դոլօրէսը միայն տաբրես է տանում կոմսի գգուանքները։ Նրա սէրը պատկանում է ուրիշին, և այդ ուրիշը ոչ այլ ոք է, եթէ ոչ կոմսի ամենամօտ, ամենամտերիմ, զինակից բարեկամը՝ Կարլոս։ Աբէլեանը ներկայացրեց կոմսի հերոսական բնաւորութիւնը հոգեբանական հարազատութեամբ։ Աբէլեանի կոմսը սկզբում մի հոյակապ կաղնի է, պարթև, ինքնավստահ, ուժեղ իր նեբքին կորովի գիտակցութեամբ. ահա նա կասկածների ճիրաններում անհանգիստ, վրդովված և դիւրագրգիռ, ահա նա և ճակատագրական յայտնութիւնների տեսարաններում կատաղի, անխնայ, բայց և բեկված, կործանված ու վշտահարված։ Սակայն նրա հոգու մէջ կայ մի սրբազան բարձր պարտականութիւն և մի վեհագոյն ուխտի նուիրվածութեան զգացմունք, որ դէն է մղում բոլոր մասնաւորը, որքան էլ սա ուժեղ լինի, և առաջ է բերում աւելի հոյակապ և սրտագրաւ ոգեորութիւն ու հոգեզմայլութիւն։ Աբէլեանը ցոյց տուեց հոգեբանական այն ելևէջները, որոնցով կոմս Դէ-Ռիզօօրը մի տրամադրութիւնից անցնում է դէպի միւսը, վերապրելով յուզմունքի աշխարհում։ Աբէլեան վստահեց բուռն ծափահարութիւններ և ստացաւ մի քանի նուէրներ։

Տիկին Սիրանոյշը Դոլօրէսի դերում այն Սիրանոյշն էր, որին մեր հասարակութիւնը տեսել է տպաւորիչ և փայլուն դերերում։ Այդտեղ կային խաղի, շարժուածքների, խօսքերի ուժեղ արտայայտութեան առիթներ, և Սիրանոյշը հանդէս բերեց իր արտիստական ընդունակութիւնները։ Սկզբում նա խաղում էր սովորականից աւելի հանգիստ, հասարակ և գունատ, որովհետև նա միւս գործողութիւններում պէտք է զարգացներ իր խաղը և գունաւոր փայլերով արտայայտէր յուզմունքներ և հոգեկան տարուբերումներ։ Սիրանոյշը արժանացաւ ծափահարութիւնների։

Տիկին Մայսուրեան իր փոքրիկ դերով ներկայացրեց յուսահատութեան հասած մօր և քաղաքացուհու հոգեկան աշխարհը ուժեղ շեշտերով, վշտի, բողոքի ու ցասմունքի բուռն թափերով, և ապացուցեց, որ փոքրիկ դերի մէջ էլ կարելի է կորով արտայայտել և բնական աղողութիւն ունենալ։

Շահխաթունին Կարլոյի դերում տուեց աչող և հոյակապ տեսարաններ, բայց տիպը ամբողջացնելու համար անհրաժեշտ է աւելի աշխատանք։ Նրա սէրը դէպի Դոլօրէսը կարօտ է աւելի արտայայտութեան, աւելի խոր մտատանջութեան։ Շահխաթունի անպայման գեղեցիկ էր վերջին տեսարանում և գրաւել էր հասարակութեան ուշադրութիւնը։ Հասարակութիւնը վարձատրեց նրան ջերմ ծափահարութիւններով։

Յարութիւնեան, Ալիխանեան, Մանուէլեան, Սևումեան, Աւետեան, տիկին Գուլազեան գեղեցիկ կատարեցին իրանց դերերը։ Առ հասարակ անսամբլը բոլորովին գոհացուցիչ էր։

Հաճելի էր տեսնել լաւ պատրաստված մի ներկայացում, որտեղ անհարթութիւնները այնքան փոքր էին, որ աչքի չէին ընկնում։

Մենք միայն մի ընդհանուր ցանկութիւն ունենք յայտնելու, որ դերասանները բարձր խօսեն։ Հասարակութիւնը շատ բան չէ լսում և յոգնում է լսողութիւնը լարելուց։

Եթէ բարձր խօսելու համար անհրաժեշտ է կրկնութիւնների ժամանակ ընտելանալ այդպիսի մի սովորութեան, ցանկալի է, որ այդ հանգամանքը ուշադրութեան առնվէր։ Սէրող

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Նոր Առողջապահիկ», հանրամատչելի երկաբաթթերթ, յաւելուած «Դիւղատնտես» թերթի, № 1.

Հաճելի տպաւորութիւն է թողնում այս նոր պարբերական հրատարակութիւնը։

Նա լոյս է տեսնելու երկու շաբաթը մի անգամ դրքերի գիրքով, երբև յաւելուած «Դիւղատնտես» թերթի։

Նախորդ տարվայ ընթացքում բժիշկ Ա. Բուդուղեանը տալիս էր «Դիւղատնտեսի» համարներում յօդուածներ «Բժշկական խնդիրների մասին», և փորձը ցոյց տուեց, որ այդպիսի յօդուածների պահանջը մեծ է հասարակութեան մէջ, ուստի միտք ծագեց ներկայ 1912 թուականից հրատարակել յատուկ յաւելուածական թերթ, նուիրված՝ բժշկական հարցերին։

Առաջին համարը, բաղկացած 32 երեսներից, պարունակում է իր մէջ հետաքրքրական յօդուածներ՝ վերաբերեալ հիւանդութիւնների էութեան, ծերութեան, սիֆիլիսին, թոքախտին և ուրիշ հիւանդութիւնների։

Թերթը իր նպատակը որոշում է այսպէս. ա) տարածել ժողովրդի մէջ բնագիտական և կենսաբանական գիտելիքներ, բ) զբաղվել անհատական առողջապահական բոլոր հիւղերով, գ) կենտրոնացնել ուշադրութիւն մանկական-դպրոցական առողջապահութեան վրա, դ) արծարծել շարունակ համաշխատակցութեան անհրաժեշտութիւնը առողջապահական ձեռնարկութիւնների համար և վերջապէս ե) շարունակել կռուել վարակիչ հիւանդութիւնների դէմ, որոնք անողոք և ամենօրեայ ջարդեր են առաջ բերում։

Յօդուածները գրված են մատչելի լեզուով և ժողովրդականացրած եղանակով։

Ցանկանում ենք նոր օգտակար ժողովրդական պարբերական թերթին կատարեալ աջողութիւն։ Ա. Ֆ.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Մայրենի լեզուի մեթոդիկա», Թ. Խզմալեանի, Ալէքսանդրօպոլ, 1911 թ., էջ 181, գ. 40 կ.։ 2) «Էսքիզներ», Աբգար Պայազատի, Թիֆլիս, 1912 թ., էջ 38, գ. 15 կ.։ 3) «Շաղիկներ», Յակ. Աղաբաբի, Թիֆլիս, 1911 թ., էջ 94, գ. 20 կ.։ 4) «Զիւն», դրամա 4 արար., Սա. Պէրբշեվսկիի, թարգմ. Զալալ Տէր-Գրիգորեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 62, գ. 40 կ.։ 5) «Մսկի Աքաղաղը», հնդկ. հեքիաթ, պատկերազարդ, Յովհ. Թումանեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 19, գ. 25 կ.։ 6) «Շահանուշի խստրիէն», Բախշոյի, Թիֆլիս, 1911 թ., էջ 16, գ. 5 կ.։ 7) «Պատանի» ալմանախի II (IV) պրակը, Թիֆլիս 1911 թ., էջ 61, գ. 20 կ.։ 8) «Սամէլ հովիկ», պօէմ Գուրգէն Հայկունու, Թիֆլիս, 1912 թ., էջ 80, գ. 50 կ.։ 9) «Տօնի համար», պիէս 1 արար., Ֆէբրոյի, Թիֆլիս, 1911 թ., էջ 31, ձրի յաւելուած «Հասկեր» ամսագրի։ 10) «Դիւան հայոց պատմութեան», գիրք Թ. (Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն I, 1778—1800), յաւելուածներով և ծանօթութիւններով, հրատ. Գ. աւ.-քահ. Աղանեանցի, Թիֆլիս, 1911 թ., էջ 556, գ. 4 ռուբլի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆԵՐ ՊԱՐՏԱՏԷՐԵՐԻՆ

Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհրդի և նրա կից հայ ուսանողական բիւրօյի միջոցներով բարձրագոյն կրթութիւն ստացած, իրանց ուսումն աւարտած անհատների թիւը հարիւրների է հասնում։

Դրանցից շատերը հասարակական զանազան ասպարէզներում յայտնի դիրքի, ապահովութեան տէր մարդիկ են։

Դրանցից շատ քչերն են ընկճվել կեանքի ծանր հարուածների տակ և անջողութեան մատնվել։

Մեծամասնութիւնը բաղաւորների շարքին է պատկանում և նրա ապահովութեան խնդիրը վեր է որևէ կասկածից։

Իբրև բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ ու պատմաբաններ՝ նրանք յայտնի են ամենքին, ծանօթ՝ բոլորին։

Նրանք բոլորն էլ մի ժամանակ կարիքի մէջ են եղել, նրա մէջ ծնվել, նրա բովից անցել։

Ուսանողական կեանքում նրանց կրած տառապանքները, քաղցն ու ծարաւը այնքան խրատական և ուսանելի են եղել նրանց համար, որ դժուար թէ կարելի լինէր երբևիցէ հեշտ կերպով մոռանալ, ուրանալ մինչև իսկ։

Զենք կարծում, որ այդ դժոխք կեանքի դառն յիշողութիւնները մոռացվին, անգամ այսօր՝ ոսկու և արծաթի չքեղ փայլի տակ։

Դրանց ստացած դումարների քանակը 30 հազարից անցնում է, մի դումար, որից ստացած տոկ տոկոսներն անգամ բաւական են տասնեակ ու հարիւրաւոր ուսանողների թշուառ դրութիւնը թեթևացնելու։

Եւ սակայն շատ քչերը դրանցից պարտք են համարում վերադարձնել իրանց պարտքերը ուսանողական բիւրօյի և Խորհրդի կասայինն։ Դրանցից ստացված դումարների քանակը մի ամբողջ տարվայ ընթացքում մի քանի հարիւր ռուբլուց վեր չէ բարձրանում։

Ուսանողական ժողովի նորընտիր բիւրօն այդ հսկայական գումարների դիմաց (30 հազար) այժմ իր տրամադրութեան տակ ունի միայն և միայն 34 ռուբլի կանխիկ դրամ, որով նա պիտի բաւարարութիւն տայ այն հարիւրաւոր դիմումներին ու խնդիրներին, որոնք չորս կողմից թափվում են նրա գլխին՝ իւրաքանչիւր ամիս պարբերաբար։

Որքան և դժուար է հաւատալ, սակայն դա իրողութիւն է, անհերքելի ճշմարտութիւն։

Մի ժամանակ բարձրագոյն կրթութիւն ստանալը արտօնված տարրերի, հասարակութեան ապահով խաւերի մենաշնորհն էր։

Այն ժամանակ քչերն էին բարձրագոյն կրթութեան գնում և գնացողները գրեթէ բոլորն էլ ապահով էին։ Նրանց մէջ հազիւ էին պատահում կարիքաւորները։

Ուրիշ է այժմ։

Այժմ բարձրագոյն կրթութիւնը իջնում է դէպի ժողովրդական խորքերը, մտնում նրա ծալքերը, դառնում մատչելի և նրա համար։

Ժողովուրդը իր լայն խաւերով հրապարակ է գալիս և՛ ուսանողական շարքերում, անէծքի նման քարշ տալով իր ետևից կարիքի բեռը։ Եւ այդ կարիքը բուսնում է օրէ-օր, ուռչում, լեռնանում ու իր ծանրութեան տակ խորտակում, փշրում հարիւրաւոր ըմբոստ հոգիներ, խիզախ թռիչքներ։ Դրա հետ հաւասար չափով չի զարգանում նրան խափանող կամ գոնէ կասեցնող ոյժը—օգնութեան գործը։ Միայն Պետերբուրգը 2000-ի չափ հայ ուսանողուսանողուհի ունի այժմ։ Թէ ինչ տոկոսն են կազմում կարիքաւորները դրանց մէջ, դժուար չէ երևակայել։ Տարէ-ցտարի նրանց թիւը աւելանում է, իսկ օգնութեան միջոցները նուազում, աղբիւրները ցամաքում։

Ցուրտ ձմեռվայ այս բուք բորանին, երբ ամեն ոք իր տաք անկիւնն ունի, մենակ կարիքաւոր ուսանողն է, որ մնում է փողոցում առանց կուշտ փորի, առանց տաք շորի։ Նա, որ ամենից շատ է աշխատում և լաւ աշխատում, նա, որ ամենից շատ է արժանի և քիչ է ստանում։

Ով ապրել է Պետերբուրգում և իր ոսկորների մէջ զգացել նեղայի ցրտաշունչ քամիների խաղերը, նա անշուշտ չէ մոռացել կարիքաւոր հայ ուսանողի ծանր կացութիւնը, անտանելի դրութիւնը։

Բոլոր դիմողներին օգնել, նրանց թեկուզ հէնց համեստ պահանջներին բաւարարութիւն տալ չէ կարող ոչ բիւրօն, ոչ եկեղեցական Խորհուրդը։

Բայց օգնել անհրաժեշտ է։

Հրամայական պահանջ։

Ահա այդ անհրաժեշտութեան առաջ խոնարհվելով Պետերբուրգի հայ ուսանողական ժողովի նորընտիր բիւրօն քաղցր պարտականութիւն է զգում իր վրա ներկայ դրութեամբ դիմելու այն բոլոր պարատէրերին, որոնք երբևիցէ իբրև նպաստ կամ թոշակ փող են ստացել Պետերբ. եկեղեցական Խորհրդից կամ ուսանողական բիւրօյից, և յիշեցնելու, որ նրանք շտապեն վերադարձնել այդ դումարները մի անգամից կամ մասամաս։

Բիւրօն յոյս ունի, որ իր կոչը արձագանք կը գտնի բոլոր նրա պարատէրների սրտերում և նրանք իրանց շուտափոյթ վճարներով կը տան հնարաւորութիւն՝ օգնութեան հասնելու ամեն օր իր դուռը ծեծող կարիքաւոր ուսանողների լեգէոններին։

Առաւել ևս բիւրօն սիրում է հաւատալ, որ պարատէրերը խոհեմ կը գտնվեն և կատարելով իրանց պարքը՝ տեղիք չեն տայ դիմելու այն ծայրայեղ միջոցներին, որոնց դիմեց Մոսկվայի ուսանողութիւնը մի տարի առաջ։

Փողերը խնդրում ենք ուղարկել՝ Петербургъ, Импер. Военно-Медиц. Акад., студ. Гургену Кармандаряну.

Պետերբուրգի հ. ուսանող.
«Ժողովի» բիւրօ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Էրզնգանի նոր յաջորդի ջանքը լինելու է լաւացնել Ռուսաստանի և Աւստրիայի յարաբերութիւնները, որոնք վատացել են 1908 թուից։ Այդ կարևոր է, ասում են թերթերը, ի նկատի ունենալով ռուս-գերմանական մերձեցումը։

— Ֆրանսիացի գրողների և սոցիալ-դեմօկրատների պատգամաւորութիւնը, ներկայանալով պրեմիէր Պուանկարէին, խնդրեց ազատութիւն տալ մամուլի գործերով կալանաւորվածներին անխտիր։ Պուանկարէն մերժեց, խոստանալով ազատել սոսկ անհատներին։

— Թիւրքաց մամուլը կուրծք է ծեծում յոյն-բուլգարական մերձեցման իրողութիւնից։

— Բուխարէստում կառավարութիւնը, հակադրելու համար օպոզիցիայի, սոցդեմօկրատների և նացիոնալ-լիբերալների միահամուռ միտինգներին, իր կողմից կազմակերպում է ցոյցեր պահպանողականների մասնակցութեամբ։ Մթնոլորտը օրէ-օր խառնում է։ Տրամադրութիւնը յուզալի է. երկիւղ կայ ընդհարման։ Զինուորական մինիստրի կարգադրութեամբ՝ ամենուրեք զօրքերը կազմ ու պատրաստ են։

— Լիսաբոն քաղաքը նմանվում է պատերազմական՝ բանակի։ Բազմաթիւ պահակախմբերից բացի՝ ռազմական վայրերը գրաւել են թնդանօթաձիգ վաշտերը։ Լոյս չեն տեսնում նոյնիսկ պաշտօնական լրագիրները։

— Եթէ Պարսկաստանը անկարող լինի Ռուսաստանի և Անգլիայի հովանաւորութեան տակ հաստատուն կառավարութիւն ստեղծել, այն դէպքում արդէն պարսկական պետութեան անկախութիւնը վտանգվելու է։

— Բ. Դուրը հրահանգագրեց իշխանութիւններին՝ ամեն միջոցով արգելք լինել ընտրութիւնների ժամանակ յոյներին և բուլգարներին։

— Չինական կառավարութիւնը շարունակ նոր զէնք ու ռազմամթերք է ստանում Գերմանիայից։

— Պէկինը լի է զօրքերով, որոնք պաշտօն ունեն անկարգութիւնների առնեն մի փոքր խեղդել իր ընում։ Ցեղափոխականները մօտենում են մայրաքաղաքին։ Պէկինից դուրս զանազան տեղերում կռիւը երկու կողմերի միջև շարունակվում է փոփոխական աջողութեամբ։

— Պէկինում արտասահմանեան դեսպանները գտնվում են արտակարգ պահպանութեան ներքոյ։ Բայտարարված է եւրոպացիներին՝ առաջին իսկ վտանգին ապաստանել դեսպանատներում։ Կեանքը մեռնում է բոլդիխանի մայրաքաղաքում։ Ամեն րոպէ սպասվում է ահեղ մրրիկ...

— Մօնգոլական իշխանները խորհրդակցութեան գումարվելով՝ վճռել են, Չինաստանի միապետական կազմի բառնալուց յետոյ, իշխան Նականտին ընտրել ներքին և արտաքին Մօնգոլիայի գլուխ և Մօնգոլիան բոլորովին անջատել Չինաստանից։

— Իւանշիկայը կայսրուհուն մի զեկուցագիր ներկայացրեց, որի մէջ յայտնված է, թէ չինական սպառազէն պետականներկայացուցչութիւնը—լինի դա հանրապետական կամ միապետական—անհրաժեշտորէն պարտաւոր է զսպել Մօնգոլիային և նրան վերստին Չինաստանին հպատակեցնել։

— Եապոնիան արդէն որոշել է զբաւել Հարաւային-Մանջուրիան և շարունակ զօրամասեր է ուղարկում։ Ռուսաստանը լռելեայն համաձայնելով դրան՝ իր կողմից միջոցներ է ձեռք առնում շանվելու Մօնգոլիայում։ Ռուսաց մի յայտնի դիպլոմատի կարծիքով՝ Միացեալ-Պետութիւնների բողոքը կունենայ սոսկ բանակուի ընոյթ։

— Ռուսաց սինոդը որոշել է վերացնել Ռուսաստանի հոգևոր ճեմարաններում սլաւեանական և մերձաւորարևելեան եկեղեցիների պատմութեան ամբիոնը։ Այդ ամբիոնը մնալու է միայն Պետերբուրգի մի ճեմարանում, ուր դասախօսում է յայտնի պրոֆ. Պալմով։

— Լուրերի համաձայն՝ կոմս Ա. Բոբրինսկին նշանակվելու է Պետական Խորհրդի նախագահ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

23 յունվարի

ԲԵՐԼԻՆ։ Համաժողովրդական ձայնաւորութեամբ 284,000 ձայնով ընդդէմ 236,000-ի ընդունվեց բանւորներին հիւանդութիւնից և դժբաղդ դէպքերից ապահովագրելու օրէնքը։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ Հէլսինգբորգի շաքարի գործարանը այրվեց ամբողջովին։ Վնասները 2 միլիոն կրոն են։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Վախճանվեց վերին պալատի փոխ-նախագահ Կալէրգօրմը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լոյս յունվ. 23-ի գիշերը Վարշավայի գծի գնացքով իր պաշտօնատեղին մեկնեց Գերմօգէն եպիսկոպոսը։

Ժող. լուս. մինիստրութիւնը յայտարարում է, որ 1912 թուի աշնանից արտասահմանեան համալսարանների կին-բժիշկները քննիչ մասնաժողովներում քննութիւն տալու ժամանակ պէտք է ներկայացնեն արտասահմանեան համալսարանների բժշկի դիպլոմ, ռուս օրիորդաց գիմնազիաների աւարտման վկայական, լրացուցիչ քննութիւններ տալու վկայագրեր։ Հրէայ դաւանութեան կանայք քննութիւն են տալու միայն Օդեսայում և Կիէվում։ Միւս համալսարանական քաղաքներում ապրելու իրաւունք ունեցողները կարող են քննութիւն բռնել նաև այդ քաղաքներում։

Առաջի մինիստրի նախագահութեամբ սկսվեց Ռուսաստանում առևտրարդիւնաբերական պալատներ հաստատելու հարցի քննութիւնը։

Կոլոգրիվի, Օդեսայի և Կազանի շրջանում ձիւնային փոթորիկներ են։

Կայսրին Ներկայացաւ Դոնեան զօրաց շրջանի ատաման Միշչէնկոն։

Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան սաստիկ մրսեց և կարօտ է լուրջ ու երկարատև բժշկութեան։

ՆՈՎՈՋԵՐԿԱՍԿ։ Երկրի կառավարիչը միջնորդում է յատկացնելու անբերրիութիւնից վնասված գիւղացիների օգտին մի միլիոն, կոզակներին՝ էլ մի միլիոն բուբլի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Զմեռային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԹՈՒՄ՝ **արագ** № 2 գնացքը՝ (I, II և III կարգի վագն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցերեկ., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կարուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բաքու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդասեր** № 6 գնացքը՝ (միայն I և II կարգի վագն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ.՝ Հաջի-Կարուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բաքու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօստասեր** № 4 գնացքը՝ (բոլոր կարգերի վագոններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում՝ 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ, 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կարուլ՝ 12 ժ. 01 րոպէին կէսօրվայ, Բաքու՝ 4 ժամ 52 րոպէի ցերեկվայ։ **Խաչ** № 106 գնացք՝ (IV կամ III կարգի վագոններով, երբ կարիքութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կարուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բաքու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդասեր** № 74/75 գնացք՝ (բոլոր կարգի վագոններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրոպոլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երևան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդասեր-ապրանքատար** № 78/79 գնացք. 5 ժ. 34 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրոպոլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **Մարդասեր** № 5 գնացք՝ (բոլոր կարգի վագոններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պօստասեր** № 3 գնացք՝ (բոլոր կարգի վագոններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդասեր** № 7 գնացք՝ (II և III կարգի վագոններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՕՐԺՕՄ՝ **մարդասեր** № 9/66 գնացք՝ (բոլոր կարգի վագն.) 3 ժ. 23 ր. ցեր., Բօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդասեր** № 5 գնացք՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօստասեր** № 3 գնացք՝ 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ** № 1 գնացք՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ **Խաչ** № 107 գնացք՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստասեր** № 72/73 գնացք՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդասեր-ապրանքատար** № 80/81 գնացք՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդասեր** № 6 գնացք՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօստասեր** № 4 գնացք՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդասեր** № 8 գնացք 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բաքու չէ գնում)։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ **Մարդասեր** № 6/10 գնացք՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Շմեմային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ), առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բաքուի-Բօսլովի-Խարկովի վրայով Ընդլայնական գծի արագ № № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտերով են։

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մոսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բաքուի-Բօսլովի և Կուլովի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հաղար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մոսկվա հաշվվում է 2877 վերստ։

Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բաքու-Բօսլով յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՍԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հ.։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Կ. Մ. ՀԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներական, վիրաբուժութեան և միզաուղ. հ.։

Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Գ. Ց. ԳՈՒՐԳԻՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Հրաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
1. 0—7

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԵՈՐԳԲԵԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վեղեմինսկայա փողոց, № 8.
(կ. չ.) 416. 100—73

ԲԺԻՇԿ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ

(Մասնագիտ. թոքերի հիւանդութիւններ)

Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(ա.օ.) 130. 100—65

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ

Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)

Միքայէլեան փող., № 36. տէլէֆոն 388.
(չ.ու.կ.) 761. 100—69

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Выпущены въ свѣтъ слѣдующіе новые труды

Н. В. АБРААМЯНА

I

Руководство Торговой Бухгалтеріи

въ связи съ нефтепромыш. и керосиноваводскимъ производствомъ по Двойной Италіанской системѣ.

Второе изданіе, дополн. и исправленное
Цѣна 2 р. 50 к.

II

Таблицы вычисленія процентовъ

отъ I до 360 дней, отъ 1 до 12% включ. и на всѣ капиталы отъ 1 до 10,000 руб.

Второе изданіе
Цѣна 85 коп.

III

Общедоступная Справочная Книжка

Для слушателей и слушательницъ Бухгалтерскихъ Курсовъ и занимающихся коп торскимъ трудомъ.

Цѣна 30 коп.

Складъ изданій при Бухгалтерскихъ Курсахъ Н. В. АБРААМЯНА въ Тифлисѣ, Николаевская, 22. с. д. Выписывающіе непосредственно изъ склада за наложенный платежъ не платятъ.

(ու. կ. չ.) 30. 10—3

Въ Книжн. Маг. „Гуттенбергъ“

въ Тифлисѣ,

ПРОДАЮТСЯ

Къ введенію на Кавказѣ Земскаго Самоуправленія. Кн. Г. Туманова. 20 к.
Начальная книжка для армянскихъ школъ, С. Мандиняна. 55 к.
Мысли стараго служаки, Шеварднадзе. 25 к.
Родство грузинъ съ испанцами по древнимъ источникамъ, Л. Меликсетъ-Бекова. 25 к.
Армянскія древности въ Аккерманѣ (въ Бессарабіи). Л. Меликсетъ-Бекова. 25 к.
Л. Толстой, Живой трупъ. 25 к.
Старинныя армянскія надписи въ музеѣ общества исторіи и древностей въ Одессѣ, Л. Л. Меликсетъ-Бекова.
Къ вопросу объ открытіи высшаго учебнаго заведенія на Кавказѣ, А. Бабова. 20 к.
Отвергнутый монахъ. 10 к.
Хачатуръ Абовянъ. 15 к.
Современная армянская литература. 50 к.
Колонизація армянъ въ югозападной Россіи. 20 к.
Звѣрь въ человѣкѣ, Кипіани. 5 к.
Юридическое положеніе верховнаго патріарха армянскаго, Меликсетъ-Бекова. 25 к.
Изъ матеріаловъ для исторіи Армянъ на югѣ Россіи. 25 к.
Цвѣты Араза, А. Исаакяна. 50 к.

44. 1—1

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

Բանաստեղծութիւնների

Ժողովածու։ Լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում։
Գինը 50 կ օպ.
(Չ. կ.) 6. 5—5

ՀԱՅԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Գ. և Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկոլայէվսկայա, № 36.
(ա.օ) 1212. 25—16

„ԳԵՂԱՐՈՒԵՍՏ“

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Պատկերազարդ հանդէս
Թիֆլիսում
Խմբագրութեամբ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ

Լոյս են տեսել I, II, III և IV գրքերը
Խմբագրվում են V և VI գրքերը, որոնց համար

Բացված է 1912 թուի բաժանորդագրութիւնը
2 գիրքը 3 բուբլի
Լոյս տեսած գրքերի հետ միասին ՏԱՍՍ բու բլի

Հատավաճառ իւրաքանչիւրը 2 ր., VI գիրքը 2 ր. 50 կ.։
Խմբագրութեան հասցէն՝ Սապէօրնայա փող. 26 (հեռախօս 1058)
Օտար տեղերի համար՝ Тифлисъ, редакція журнала „Гехарвестъ“ կամ Tiflis, Rédaction de la revue „Kegarvest“.
Թիֆլիսում բաժանորդագրութիւն ընդունվում է նաև «ԳԻՐ» գրախանութում։

45. 2—1

„ԲԻԶԱՆԴԻՈՆ“

ԱԶԱՏԱԿԱՆ՝ ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

Հիմնուած 1896 Նոյեմբեր 1-ին

Ազգային, քաղաքական, գրական և տնտեսական օրաթերթ։ Տպանվեց տարիէ ի վեր կը հրատարակուի կանոնաւորապէս՝ տնօրէն-խմբագրապետութեամբ յայտնի հրապարակագիր պ. Բիւզանդ Քէչեանի, և Թիւրքահայ ամենէն աւելի տարածուած թերթն է։

Բաժանորդագրութեան պայմաններն են՝ Ռուսաստանի համար 14 բուբլի տարեկան, 7 բուբլի վեցամեայ, 3½ բուբլի՝ եռամեայ։ Կարելի է խրկել թղթադրամ կամ մանդատ-պօսթ։

Բաժանորդագրութիւնք կը սկսին ամեն ամսոյ 1-ին, 10-ին և 20-ին։ Ապառիկ բաժանորդագրութիւն չկայ։

Դրամին հետ պէտք է յղել նաև բաժանորդին ֆրանսերէն որոշ գրուած հասցէն։

Դիմել Rédaction du journal «Puzantion» Stamboul. Sultan Hamam, Constantinople (Turquie).

2—1

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ գրախանութում վաճառվում են

«Ատրպատական», պատկերներով, Ե. Ֆրանգեան	1 ր. 50 կ.
«Բանաստեղծութիւններ», Յովհ. Թումանեանի, չքեղ հրատար.	3 ր.
«Վէպիկներ», Տօլստոյի I և II գիրք	1 ր. 40 կ.
«Ինսուն և երեքը», Վիկտոր Հիւգոյի	1 ր. 50 կ.
«Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում», Ջէյմս Մօրիէրի	3 ր. 50 կ.
«Հայերը Ռուսաստանում», Մխիթար վարդապետի	80 կ.
Մուրացանի երկասիրութիւնները, երկու հատոր	2 ր.
«Դիւան հայոց պատմութեան», Թ. գիրք, պատկերազարդ	4 ր.
«Մանկիկ, Մանուկների կրթութիւնը», բժ. Արծրունու	40 կ.
«Պատմութիւն հայոց գրականութ.», սկզբից մինչև մեր օրերը, Փափազեանի	1 ր. 50 կ.
» » Պալասանեանի սկզբից մինչև մեր օրերը »	1 ր. 50 կ.
«Մայրենի լեզուի մեթոդիկա», Ղազարեանի	40 կ.
«Ուսուցման և դաստիարակութեան հոգեբան. հիմունքները», Խմշալեանի	40 կ.
«Գուտտենբերգի կենագրութիւնը», Գուտտենբերգի պատկերով, Թառայեանի	40 կ.
«Մեղրագիտ», ժողովածու հայ և օտար գրականութեան, Զարդարեանի	25 կ.
«Հայ ճարտարապետութիւնը», Թորոսմանեանի	1 ր. 50 կ.
«Բանաստեղծութիւններ», Յովհ. Յովհաննիսեանի	1 ր. 50 կ.
«Ոսկէ բարեկամ ընտանեաց կամ Էփրեմվերդի»,	5 ր.
«Հայ գրողներ», (տաճկահ. գրող.) Աղայեանի, Թումանեանի և Փափազեանի	2 ր.
«Փոթորկից առաջ», վէպ Ա. Յովհաննիսեանի	1 ր.
«Աղքատին պատիւը», 4 հատոր, Ալթունեանի	2 ր.
Էջմիածնի, Շիրակ, Զմշկեան ծոցի օրացոյցներ	20 կ.

Դիմել՝ Тифлисъ, Книжн. магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустяну. 43. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

պատկերազարդ

„ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ“

XXI գիրքը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Գաւիթ կամ ժամատուն՝ Թ. Թօրամանեանի.—Ֆոլկլորի միջազգային գաղնագրութիւն՝ Խ. Սամուէլեանի.—Վասպուրականի նշանաւոր վանքեր՝ Ե. Լալայեանի.—Վասպուրականի բանաւոր գրականութիւնից՝ Ե. Լ.—Մխական կարգերը հայոց մէջ՝ Ե. Լ.—Տիգրան Մեծի դրամները՝ Ատրպետի.—Կոմսուհի Գ. Ս. Ուվարովան՝ Ս. Տէր-Աւետիսեանի.—Մատենախօսութիւն.—Ղուկասեան Մատենադարան՝ Ե. Լ.։ Զոպանեանի Նաղաշ Յովհաթան՝ Գ. Լեոնեանի։ Տ. եպ. Պալեանի Հայ աշուղներ՝ Գ. Լ.։ Этнографическое Обозрѣніе Խ. Ս.։

Ընդունվում է բաժանորդագրութիւն XXI—XXIV գրքերի. երկու գիրքը՝ 3 ր., չորսինը՝ 5 ր.։

Դիմել՝ Въ Редакцію «Азгаграканъ Андесъ», Тифлисъ. Խմբագրատունը գտնվում է Լերմօնտովսկայա փ. № 1 տանը։

42. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ՀԱՅ-ԱՆՑԵԱԼԸ“

անունով մեծադիր բարելիեֆը, ձուլված ամենաբարձր տեսակի ալէբաստրից ու ներկված ոսկու կամ արծաթի գոյնով։ Կոտրվելուց ապահովելու համար, ձուլուածքի մէջ թաղված է փայտեայ շրջանակ, վրան հատ քաթան քաշած։

Բարելիեֆը ներկայացնում է 15 հայ թագաւորների, 5 եկեղեցականների ու ս. Էջմիածնի ուռուցիկ պատկերների խմբանկարը, 18×13×½ վերշոկ մեծութեամբ ու 13—15 ֆունտ ծանրութեամբ, շրջապատված հայկական ոճի գեղեցիկ շրջանակով։

Ուղարկվում է փայտեայ արկղի մէջ խնամքով ծրարած։

Գինը՝ 10 ր. ճանապարհի և այլ ծախքերով։

Թիֆլիսում 8 բուբ.։

Գեղարուեստօրէն շքեղ ներկված օրինակները 15—25 բուբ. և աւելի արժողութեամբ, ըստ առանձին պատուէրի։

Վերադիր վճարով ուղարկվում է միայն արժէքի կէսը ստանալուց յետոյ։ Մամուլի կարծիքը բարելիեֆի մասին տես. անցեալ 1911 թ. «Մշակ» № №221 և 222, «Հորիզոն» № 242, և «Սուրհանդակ»։

Դիմել՝ Тифлисъ, Карусельный спускъ, д. № 1, кв. 2, В. С. Демирчоглянцу.
(Չ. ու. կ.) 44. 5—1

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Գարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ըէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկան., բանկային և առևտրական). 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (գործարանական). 2) Առևտրական թուաբանութիւն. 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համրիչի վրա. 7) Գայլչագրութիւն, արագագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղումն), բ) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլոգրաֆիա (բեմնդատն և ուր.) և 4) առևտր. գրքեր. 1) Օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլոգրաֆիա (բեմնդատն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Ունկնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի չէնքում։

(ա. օ.) 1193. 0—22

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.